

891.99.092

Р-81Р

03 APR 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՒՔ

891.99.092

10-81 Գ

ՄԻՀՐԱՆ ԲՐԱԶՅԱԿ



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ

== ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ==

I

ԾԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄՅԱՆ

(ԲՆՆԱԳՈՍԱՏԻՊԱՆ ՓՈՐՁ)

Դ. Ա. 195 122

Մ 763



ԹԻՖԼԻՍ — 1927

891.99.092 28823-60

10-81-Գ

Համալսարանային
կայանի գրադարան

ՆՍՏ 3090 22/30
2880 20/181

Մ 763



28823.60

Գրանագիր № 1454.

Տիրաժ 1000.

Թիֆլիս, Ժ.Տ.Գ.Ս. Պոլիգրաֆտրիստի 4-դ տպ., Պաշկ. փող. № 3.



Մ. ԹՈՐԳՈՄՅԱՆ

ՎԱՆԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թող բոլորովին պատահականության արդյունք չհամարվի այն յերևույթը, վոր ժամանակակից շնորհալի և տաղանդավոր արձակագիրներէից մեկը՝ Ծերուն Թորգոմյանը, ինչպես նաև Հայաստանի Պրուետ Գրողների Ասօցիացիայի ղեկավարները՝ Վանեցիներ են:

Վանի կուլտուրական կյանքը դարավոր անցյալ ունի և ստաժ: Մեր քաղաքակրթութեան բոլոր բնագավառներում Վանը մի առանձին տեղ ունի զբաված: Գրականութեան մեջ մասնավորապես:

Գտնվելով արևելքի և արևմուտքի ճանապարհների վրա, Վասպուրականն արձագանք եր տալիս ամեն կողմից ներս խուժող հոսանքներին:

Իեպի Պարսկաստան, Միջագետք և հունական գաղութները ձգվող կարավանների անձայրածիր շարքերը՝ հարթում եյին ճանապարհը կուլտուրայի և քաղաքակրթութեան:

Հազարամյակներ շարունակ ապրելով խաղաղ մի կյանք, Ֆանատիկորեն տարված աշխարհ

տանքով, կրքոտ և անհամբեր դեպի նոր խոսք, աչքերը սևեռած դուրս, նախանձախնդիր հառաջադիմության՝ վանեցիք այսպիսով կառուցին մի ուրույն կուլտուրա, ուրիշ բարքեր, ուրիշ սովորություններ, վորոնց ընդհանուր գումարը մենք Վանի կուլտուրա կանվանեյինք:

Մի շարք արհեստներ իրենց բարձր կատարելագործությանն էյին հասել այնտեղ: Բնակարանները վուկերիչների և փորագրիչների պատրաստած ամենանուրբ իրերով էյին զարգարված, վորոնք հազվագյուտ ճաշակի դրոշմն էյին կրում իրենց վրա: Անգրագիտությունը դեռ ևս սրանից յերեք քառորդ դար առաջ, լիկվիդացիայի յեր յենթարկված այնտեղ: Անգրագետներն աննշան տուկոս էյին կազմում, վորոնց մատի վրա կարելի յեր համբել: Գրքերով և գրականությամբ զբաղվելը հնորյա սովորություն էր դարձել Վանում: Գիրք և գրիչը ավանդական սիրելի բաներ էյին այդ յերկրի մարդկանց համար: Նրանք խաղաղիկ յերեկոսներ հավաքվում էյին, կարգում, սովորում, վիճում: Գրքեր և գրողները հավիտենական թեմաներ էյին այդ կրուժոկների համար:

Վերին աստիճանի գործնական այդ ժողովուրդը՝ ընդունակություն ունեցավ տալու նաև մի ճոխ գրականություն:

Դեռ անցյալ դարի հիսնական թվականներ

ըին, ուրարտական կուլտուրայի հինավուրց որսրանում՝ Վանի լճի ավազանում, առաջ յեկավ գրական մի մեծ շարժում, վոր յեղած էր յերբեկիցե:

Այն ժամանակ, յերբ թրքահայկական մյուս գավառները նիրհում էյին թանձր խավարի և ագիտության մեջ, Վանի կապուտակ լճի ափերին վառվում էր լուսատու մի փարոս:

Մենք տեսնում ենք մի ամբողջ գրական սերունդ: Ինչպես Զլատովրատսկին, Ուսպենսկին և Նեկրասովը Ռուսաստանում, նույնպես մեր են ժամանակվա գրողները Նարոզնիկական գաղափարներ էյին սերմանում:

Նույնը յեղել է մեզ մոտ — Վանում: Այնտեղ են Սրիմյան Հայրիկը իր գրական գործերով, Սըրվանձոյան Գարեգինը իր գյուղական և կենցաղական հարազատ պատկերներով, Փիրզալեմյան Ասոնը, վոր մի քանի հազար ժողովրդական յերգեր և հեքիաթներ հավաքեց, Դեկանց Արխատակեսն ու Տիգրան Ամիրջանյանը, վորոնք հանդիսանում են լիրիկ յերգիչները ուսմիկի: Նրանց կողքին մենք տեսնում ենք Արսեն Թոխմախյանին և Յերեմիային: Ինչպես կարող ենք թվել և ունի թվենք: Գրական մի ամբողջ շկուլ՝ բազմաթիվ հետևողներով: Մի ամբողջ բանակ գրական գաշտում:

Այս բոլորը յեղել ե մեզանից յոթանասուն և հինգ տարի առաջ: Գրական պեղումներ կատարելով, մենք պետք զգացինք տարիների մոռացութիւնից դուրս քաշել գրանց և նոր հասարակութեան սեփականութիւնը դարձնել:

Ինքնաբուխ և տարեբային գրական այս շարժումը նարոգնիկական բնույթ եր կրում:

Ժողովրդական նախապաշարումներ, գյուղացու սնտախապաշտութիւն, ժխտական վերաբերմունք դեպի հետամնացութիւնն ու տգիտութիւնը: Այս բոլոր հարցերն ու խնդիրներն արձագանք են գտել մեր են ժամանակվա գրակա-նութեան մեջ:

Բնորոշ գիծը նրանց գրականութեան՝ պարզութիւնն եր և ջերմութիւնը: Վասպուրականի բնութեան պես ծաղկալի և գունեղ եր նրանց վոճը: Վարագա սարի ծաղիկների պես հոտավետ եր նրանց լեզուն:

Վանի շրջանի ժողովրդական բանաստեղծութիւնները, բարձր գեղարվեստական արժեք եյին ներկայացնում:

Կարիք չկա խորասուզվել պատմութեան խորքերը, հասնել սիրո և վարդի յերգիչ Ն. Զարյանի մեծանուն հայրենակից Նահապետ Քուչակին: Հասնել Գրիգոր Նարեկացուն – ամենաբարձր կատարը միջնադարյան միստիցիզմի:

Պետք ե ընդունել, վոր գրականութիւնը մի հարատե և համատարած կյանք ե ունեցել Վանում: Պերմամենա գրական մի պրոցես ե ապրել Վանը:

Անգամ համաշխարհային պատերազմը, տեղահանութիւնն ու գաղթը, անկարող յեղան վոչնչացնել նրանց այդ պոստենցիալ կարողութիւնները:

Յերբ 1911 թվին ցաք ու ցրիվ յեղավ Վանի հովտում ծվարող ժողովուրդը, նա դարձյալ չմոռացավ իր հին տրադիցիաները: Վերահաստատվելով պատմական Հրազդանի ափերին, նրա վորդիները նորից սկսեցին զարգացնել մեծ նախորդների գործը և անշեղ պահել ավանդական սովորութիւնները:

Նորից հրապարակ քաշվեցին գիրք և գրիչը:

Վանեցիները՝ Վասպուրականի լճի գեղածիծաղ ափերին թողին դարերով կերտած իրենց կուլտուրան, բայց «հոգևոր գանձերը» շալակած, անցան սահմանից այս կողմը և մի նոր գեղեցիկ պարտեզ տնկեցին Զանգվի ափերին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ասպարեզ ե իջնում յերիտասարդ գրողների մի նոր սերունդ:

Ծերուն Թորգոմյան, Վեսպեր, Ազատ Վշտունի, Լեռ Կամսար, Ալազան, Նաիրի Զարյան, Գ.

Մահարի, Մ. Սարմեն, Ն. Դաբադյան, Վ. Թեր-
զիբաշյան և այլն

Դրանցից վոմանք մկրտվեցին հոկտեմբերյան
ավագանու, իսկ մեծ մասամբ յերեկի տղա-
ներն են մեծացած և հասակ քաշած մեր աչքին
առջև: Դրանք Խորհրդային Հայաստանի և հեղա-
փոխութեան զավակներն են: Դուքս յեկած քաղա-
քացիական կռիվների բովից, անցած հոկտեմ-
բերյան փոթորկալի ալիքներից: Հիսնական թվա-
կաններից հետո առաջին անգամ ենք տեսնու-
մի այսպիսի գրական ճոխ շարժում:

Զույգ գրական շկուլաներն ու խմբավորում-
ներն ունեն համանման գծեր:

Հասարակական եկվիվալենտը զույգ գրական
ըջանների՝ դա նարոդնիկական վոզին ե, վո-
րով սոցորված ե սվյալ ըջանների գրականու-
թյունը:

Վերջերս, մեզանում, իսկ ավելի խոշոր չա-
փերով Ռուսաստանում, առաջ ե յեկել գյուղա-
գիրների մի հսկայական շարժում և մի մեծ բա-
նակ, վորոնք խորհրդային նարոդնիկներ են ան-
վանվում:

Առաջին բնորոշ գիծը յերկու գրական հո-
սանքների՝ այն ժողովրդասեր և ժողովրդա-
վար շունչն ե, վորով պարուրված են մեր
գրողները: Յերկու ըջանին ել պրովինցիալիզմը

ներս ե թափանցում, խուժում գրականութեան
մեջ և վորողում նրան: Ռամիկի, բանվորի լեզ-
վով խոսելը, դառնում ե պայման գրողների հա-
մար:

Զույգ շկուլաների մարդիկն ել դուքս են յե-
կած ժողովրդական ամենախոնարհ խավերից:

Յերկու ըջանի գրականությունն ել աչքի
յե ընկնում իր արյան առատութեամբ, իր ավյու-
նով, պարզութեամբ և տեղական գունավորմամբ:

Հիսնական թվականների նարոդնիկական շկու-
լայի և մեր որերի պրոլետարական ասոցիա-
ցիայի ներկայացուցիչներն ունեն նույն տենդենց-
ները: Առաջինները ձգտում եյին դեկավարել ամ-
բողջ գավառի — Տաճկահայաստանի գրականու-
թյունը, իսկ վերջիններս վերաբնակվելով Հայաս-
տանի մայրաքաղաք Յերևանում, ճգնում են ի-
րենց գրողը դնել յերիտասարգ պրոլետ-գրակա-
նութեան վրա:

Յեթե վերև առաջ բերած մեր համեմատու-
թեան յեզրերը կարող են դիսկուսիա առաջ բե-
րել, ապա անվիճելի յե այն, վոր զույգ ըջանի
գրողներն ել ետնոգրաֆիական նույն ծագումն
ունեն:

Մեր յերիտասարգ գրողներից շատերի, ինչ-
պես նաև ընթերցողների համար, գուցե անա-
խորժ լինի հիշեցնել այս հանգամանքը: Յեթե

Հայնրիխ Հայնեյի «հրեական ծագումը նրա համար հպարտութեան, յերբեմն ել տանջանքի առարկա յեր» (Ուրվագծեր արևմտյան գրականութեան պատմութեան, Ս. Կոզան, էջ 261), ապա մերոնց համար միայն «անախորժ» առիթ կարող է ծառայել վանեցիական ծագումը:

Յեւ մենք իրավունք չունենք լուսնային անցնել պատմական մեծ իրողութեան վրայից, անտեսել եանոգրափիական ելեմնտը, վոր խոշոր ֆակտորներից մեկն է գրականութեան զարգացման պրոցեսը պարզաբանելու համար:

Համաշխարհային գրականութեան պատմութեանից բազմաթիվ որինակներ կալելի յե բերել այդ ուղղութեամբ:

Հայտնի յե Bretons—Բոեթոնների և Celtiques—Կելտերի դերը Փրանսիական գրականութեան մեջ: Ֆրանսիայում նույնիսկ, յերբեմն, գրականութեան պատմութեանը կազմվում է ետնագրափիական ծագման հիման վրա: Նույն ուսույթական տարրը շեշտվում է նաև ուսական գրականութեան մեջ:

XIX դարում կենտրոնական Ռուսաստանը խուժում է գրական ասպարեզը, Լ. Տալստոյը՝ Տուլայից եր, Տուրգենևը—Որլովից, Ակսակովը—Որենբուրգից, Գոնչարովը—Սիմբիրսկից: Բոլորն ել Ռուսաստանի կենտրոնական ուսույթներից:

Իսկ մեր որերում ուժեղացել է Սիբիրյան ելեմնտը: Շեչկովը, Իվանովը, Բաբելը սիբիրցիներ են:

Մարքսիստական քննադատութեան տեսակետից, բոլորովին անկոխ մի գետին է ներկայացնում հիսնական թվականների եպոխան: Դեռ կուսական քղանցքն է պարուրում մեր գրականութեան պատմութեան այդ մարզերը:

Պատմական մատերյալի մեթոդը, դեռ ևս իր վերագնահատման որիյեկտ չի դարձրել վանի կուլտուրան:

Վերին աստիճանի հետաքրքրական հարց է առաջ գալիս՝ թե ինչպե՞ս է լինում, վոր «Ռոբու ադբարների» և «Ձեր ծախող Ակոների» յերկրում դեռ սրանից յերեք քառորդ դար առաջ, զարգանում է մի փարթամ գրականութեան, այն ժամանակ, յերբ աները ձեթե ճրագի աղոտ լույսով եյին միայն լուսավորված: Ինչպիսի սոցիալ-դասակարգային և անտեսական փոխ հարաբերութեանները մոտիվներով ել բացատրենք, այնուամենայնիվ, մենք չենք կարող անտեսել ցեղագրական տեսակետը, մանավանդ, յերբ զուգահեռ ենք անցկացնում մեր որերից մինչև հիսնական թվականները:

Վ. Ի. Լենինը «Մարքսի և Մարքսիզմի մասին» զրքում խոսելով XVIII դարի Փրանսիա-

կան նկարչության և գեղարվեստի մասին՝ գրու-
նում ե, վոր «տնտեսական ֆակտորը իր տեղը
գիշել ե, հոգեբանական ֆակտորին»:

Մենք նպատակ չունենք հիմնավորել այս
թեորիաները: Մեր թուլցիկ եքսկուրսիան նպա-
տակ ունի միայն թարմացնել ընթերցողի հիշու-
ղության մեջ անցյալը, և ցույց տալ որգանական
այն կապը, վոր տարիների մոռացությունից մեզ
ե ձգվում:

Այդ տեսակետից, ժամանակակից գրողները
մոհեկաններն են հիսնական թվականների գրա-
կան մեծ սերնդին: Նրանց վորդիները մոգիֆի-
կացիայի յենթարկվելով ժամանակի հետ, հանե-
ցին իրենց հայրերի կապույտ «չուխաները» ու
կոշտ հագուստները, պրոլետարական կարմիր պլուզ
հագան, գլխներին գործարաններում մազութից
սևացած կեպին գրին, և կրծքերին ել «հիմ»
փակցրին: Պլեխանովի բառերով, «գործարանային
կաթսայում յեփվեցին»:

Նրանց տրեսավոր հայրերը նահապետական
միջավայրի, իսկ վորդիները՝ հեղափոխական պրո-
լետարիատի իդեոլոգիայի յերգիչներն են: Բայց
պրոլետ-գրականության հիմքում գյուղն ե պառ-
կած:

Սոցիալ քաղաքական ասպարեզում բանվոր
գյուղացու կապի լոզունգն ե գրված, նույն գրո

շակի տակ ծաղկում ե նաև մեր գրականությունը:

Յերբեմնի նարոգնիկական գաղափարներից
առողջ տարրերը միացել, սինթեզի յեն յենթարկ-
վել դասակարգային աշխարհայեցողության հետ:
Են ժամանակ, ժողովրդական համայնապարփակ,
ճապաղ սկզբունքներն եյին շրջանառության մեջ,
իսկ հիմա, բանվոր դասակարգի հեղափոխական
աշխարհայացքն ե վերջին կուրսը:

Թեև սոցիալ-քաղաքական ասպարեզում մար-
քսիզմը և լենինիզմը դուրս են վնդել նարոգ-
նիկությունը, բայց գրական ասպարեզում, նա շա-
րունակում ե ապրել:

Այժմ, յերբ ներկան անցյալի հետ միացնող
բոլոր կամուրջները խորտակված են, պարագոքսի
պես մի բան ե յերևում հաշտեցման այս փոր-
ձերը: Բայց անուրանալի յե սրտի և հոգու ասո-
ցիացիան:

Ընդգծելով Վանի նշանակությունը մեր գրա-
կանության պատմության մեջ, վերակենդանաց-
նելով անցած գնացած ժամանակների գրական
դեմքերին, գուգահեռ անցկացնելով հիսնական
թվականներից մինչև մեր օրերը, յես նպատակ
չունեմ շոյել վանեցիների նեղ հայրենասիրական
զգացումները: Հետադարձ այս ակնարկը պետք եր
պատկերացնելու այն ընդհանուր ֆոնը, վորի վրա
գծազրվում են ժամանակակից գրական դեմքերը:

Առաջին հերթին՝ ԾԵՐԱՆ Թ՛ՈՐԳՈՒՅԱՆԸ:

Մ. ԹՈՐԳՈՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆԲԸ

(Ծնված 1897 թ.)

1.

Յերեսուն տարեկան և այժմ: Տասնևութ տարեկան հասակում, լույս տեսավ նրա առաջին տպագրված յերկր:

Ծնվել է Վանում: Միջնակարգ կրթությունը ստացել է նույն քաղաքի Յերամյան դպրոցում: Ապա ավարտել է մանկավարժական քառամյա բարձրագույն կուրսերը: 1915 թվի մասսայական տեղաձանուկությունից հետո, անցնում է Անդրկովկաս, մնալուն կերպով հաստատվելով Թիֆլիսում: Պրոֆեսիայով ուսուցիչ է, բայց ուսուցչական կարիերան նրան չի գրավում: Մ. Թորգոմյանին հետաքրքրում է գրականությունը:

Գրելու ձիրքը նրա մեջ նկատվել է վաղ հասակից: Դեռ աշակերտական գրասեղանից նա ս չքի յե ընկնում գրելու ընդունակությունը: Ուսանող ժամանակ, անձնատուր է լինում փիլիսոփայական պետիմիստական գրականության: Ա-

28223-60

~~Մ. Թորգոմյան~~



գահաբար կարդում Շոպենհաուերի, Հարդանի և Ոտտո Վեյնինգերի գրվածքները: Գրանց ազդեցություն տակ գրում է «Մահվան թերթեր» վերնագրով մի պատկեր, վոր տպված է «Գեղարվեստի» մեջ և արժանացել է գրադասների գովեստին:

Հետո նա թողնում է փիլիսոփայությունը և իրեն հովիրում գեղարվեստական գրականություն:


Անդրանիկ պատմվածքը տպվեց 1917 թվին Բագվում հրատարակվող «Դործ» ամսագրում, «Հաչակս գլուխդ լինի թող» վերնագրով, վորը ընդհանուր ուշադրություն գրավեց:

Քննադասներն անխտիր նրան համարում էին շնորհալի արձակագիր:

Դ. Անանունը, հանձինս Թորգոմյանի տեսնում եր ապագա թրքահայ մեծ գրողին: Այստեղ միջանկյալ նկատենք, վոր հեղինակը ճիշտ է, հետագայում տեղ գրավեց մեր գրականության մեջ՝ վոչ թե թրքահայերի, այլ «ուղեկիցների» շարքում:

Այնուհետև նույն ամսագրում տպվեցին հաջորդաբար՝ «Անքառավ ծաղիկներ», «Կիև մը» և «Քեռիկ» պատմվածքները:

Մեծ հաջողություն եր վոչ մի գրական անցյալ չունեցող մարդու համար, բազմել մի այնպիսի լուրջ գրական հասարակագիտական ամսագրի եջերում, յե՛ր յե՛ր անունը ն եր:



Գրողի համբավը ապահովված էր այլևս Ծ. Թորգոմյանի համար:

1918 թվին հրատարակեց «Հրագրան» գրական-գեղարվեստական ժողովածուն:

Այնուհետև Ծ. Թորգոմյանին տեսնում ենք Հյուսիսային կովկասում, վորտեղ նա գրադվում է կուլտուր-կրթական աշխատանքներով: Վրաստանի խորհրդայնացումից հետո, վերադառնում է Թիֆլիս և աշխատում է վորպես ուսուցիչ, իսկ գրական ասպարեզում տիրում է յերկար լուսթյուն:

Թվում էր, թե Ծ. Թորգոմյանը հեռացավ մեր գրական հորիզոնից վորպես մի ասուպ:

Թվում էր, թե հեղափոխության ալիքներն իրենց տակովն արին Ծ. Թորգոմյանին:

Թվում էր, թե մեծ հոկտեմբերյան փոթորիկները և կռիվները շփոթեցրել են Ծ. Թորգոմյանին, և նա իր գրական ուղին կորցրած կանգ է առել տուպիկի (փակուղու) առջև, յենթարկվել քարացման:

Բայց, ահա, անցյալ տարի լույս տեսավ նրա սպազրված և անտիպ վեպիկներից և պատմվածքներից կազմված առաջին ժողովածուն: Նա, վորին մեռած էին համարում, հարուսթյուն առավ «Ասկավապես Ազնեսայի» պես:

Մոտիկ ապագայում լույս է տեսնելու նրա յերկերի ժողովածուի յերկրորդ հատորը:

Այժմ, Ծ. Թորգոմյանը Վրաստանի Հայ Գրողների միության վարչության անդամ է: Ակտիվ մասնակցություն ունի Հայարտան գրական սեկցիային: Այդտեղ նա շփվում է ժամանակակից հասարակական և գրական հոսանքներին:

Դեռ Ծերուն Թորգոմյանը չի տվել գեղարվեստական խոշոր գործ և համայնապարփակ տիպ: Չնայած նրա գրական գործունեյության տասնամյա անցյալին՝ այն ու ամենայնիվ դեռ յերիտասարդ ուժ է Ծ. Թորգոմյանը, այդպիսի համայնարժեք գործեր տալու համար:

Դժվար է նրա մասին մի վերջնական կարծիք կազմել: Բայց այնքան, վորքան տվել է նա մի քանի տարվա ընթացքում, բավական են լույս սփռելու այն ուղիների վրա, վորտեղից անցել է նա: Դա կոգնի մեզ ցույց տալու այն գլխավոր ետապները նրա գրական ուղևորության, և այն մեծ հնարավորությունները, վորոնց կարող է հասնել Ծ. Թորգոմյանը մոտիկ ապագայում:

2.

Ա. Կարինյանը «Խորհրդային Հայաստան»-ում Արագու մասին գրելիս միանգամայն ճիշտ է նկատում, «մեր մեջ գրողներ կան, վորոնք չնայած այն հանգամանքին՝ վոր տասնյակ տարիներով գրիչ են շարժում, այնուամենայնիվ ուշա-

դրության չեն արժանանում քննադատների կողմից»:

Ծ. Թորգոմյանը նախանձելի գրող կարող ե համարվել այդ կողմից:

Հենց առաջին անգամից նա ընդհանուր ուշադրության արժանացավ:

Շատերն են արտահայտվել նրա մասին, անգամ ուսերեն թերթերը:

Վերջին անգամ արտահայտվելով Ծ. Թորգոմյանի մասին՝ մարքսիստ քննադատ Սուրբաթյանը գրում ե. «Ծ. Թորգոմյանը շնորհալի արձակագիր ե, խորհրդային գրող, մե ուղեկիցը: Վորժ գրիչը ուշադրության արժանի գրող ե դարձնում նրան»: («Մարտակոչ» № 128. 1926 թ.):

Սակայն գրողներն այս կամ այն գրուպիերով կայի մեջ դասավորելով հարցը չի սպառվում: Շատ անգամ պրոլետարական համարվող գրողները, իսկապես շատ հեռու յեն բանվորական արամադրություններ և գաղափարախոսություն արտահայտելուց. հայտնի յե յերիտասարդ քննադատ Գ. Վանանդեցու կարծիքը Չարենցի մասին:

Ամենից առաջ ո՞վ ե ուղեկիցը:

Տրոցկուն ե պատկանում այս պատկերավոր արտահայտությունը: „Литература и революция“ գրքի մեջ գրում ե նա. «բուրժուական գեղարվեստի, վոր անց ե կենում յերգերի և լը-

ուության մեջ և նոր գեղարվեստի, վոր դեռ չկա, ստեղծվում ե անցողակի գեղարվեստ՝ առավել կամ նվազ չափով որգանապես կապված հեղափոխության» (եջ 41—42): Ուղեկիցներին Տրոցկին համարում ե ուսական գրականության «ատրյատ»:

Բորիս Պիլնյակը, Վ. Իվանովը, Նիկոլայ Տիխոնովը, Եսենին, Ս. Բլոկ, Վ. Բրյուսովը ուղեկիցների տաղանդավոր ներկայացուցիչներն են ուսական գրականության մեջ:

Մեզ մոտ մի այլատարր բանակ են ներկայացնում ուղեկիցները. նրանց շարքերում կան ծերեր—Նարդոսը, Դ. Դեմիրճյանը, կան և յերիտասարդներ. Ալսելը. իսկ դրանց արանքում ընկած ե ուղեկիցների միջին սերունդը՝ Ծ. Թորգոմյան, Ս. Զորյան, Վ. Թոթովենց, Արազի, Վեսպեր:

Մի ընդհանուր գիծ հատուկ ե մեր բոլոր ուղեկիցներին: Նրանք բոլորն ել իրենց ստեղծագործությունների նյութը վերցնում եյին բուրժուական և մանր բուրժուական միջավայրերից, բայց հոկտեմբերից հետո, կամաց—կամաց, կայան առ կայան, նրանք հասնում են մեր որերին, կանգնում խորհրդային որինետացիայի վրա, ընդունում հեղափոխության նվաճումները: Պապու-

չիկները բանվոր դասակարգի ավանգարդում չեն կանգնած, այլ ուղեկցում են նրան:

Որգանական ավելի թույլ կապերով են կապված բանվորական և աշխատավորական լայն զանգվածների հետ, քան կոմմունիստ գրողները: Չունեն սեփական իդիոլոգիա: Այդ տեսակետից մի մի մոլորակներ են ուղեկիցները, վորոնք թափառում են հեղափոխական պրոլետարիատի շուրջը, նրա դասակարգային լույսով լուսավորում իրենց ուղին, իրենց որբիտը:

Յեփվելով պրոլետարական կաթսայում, ուղեկիցները դառնում են հարազատ արտահայտիչները պրոլետարական պայքարի և գաղափարախոսության: Աստիճանաբար վերանում ե անտագոնիզմը գրական շկոլաների միջև, ստեղծվում ե մի համատարած և համայնապարփակ գրականութուն խորհրդային մասշտաբով:

Ինորոշ ե, վոր ուղեկից պոետ Վեսպերը, իր բանաստեղծութունների ժողովածուի ճակատին «Կայարաններ» դրոշմեց. դրանով նա ուզում եր ասել, վոր յեղեմիլիների, սոճիների և մայրենի յերգերի քնարերգու յերգիչը, կարող ե յերգել «Մայիսի մեկը» և «Ելեք տրոկայանը»: Ս. Խանոյանը՝ անցյալ տարի նրան նվիրած գրախոսականում, այն միտքն եր արտահայտում, վոր «Վեսպերը ուշացել ե բավական»:

Յեթե քաղաքական ասպարեզում խոշոր նշանակութուն ունի ստափի հարցը, ապա գրականության և գեղարվեստի ասպարեզում այդ հարցը կորցնում ե իր այժմեականութունը: Այստեղ մեզ պետք ե հետաքրքրե այն խնդիրը, թե գրողը կարողացել ե Լմբոնել մեր իրականութունը, ինչպէս ե արտացոլում այդ իրականութունը նրա ստեղծագործության մեջ, և թե վորքան հարգատօրեն ե արտահայտվում մեր խորհրդային աշխարհը նրա գրականության մեջ: Կարճ ասած՝ մի հարց պիտի տանք. «Ինչ գործ ե շինում նա և վորտեղ ե գնում»:

Վորոնենք այդ հարցերի պատասխանը Ծ. Թորգոմյանի յերկերի մեջ:

III

ՀՈՍԱՆՔԻ ԴԵՄ

Քննադատական հիմնավոր անալիզի տեսակետից, հեղինակին պետք է մոտենալ մոշ թե ժամանակագրական կարգով, այլ իդիոլոգիական:

Հարկավոր է ի մի հավաքել, մի հայտարարի բերել գրողի գանազան ժամանակներում լույս տեսած աշխատությունները, վորոնք միևնույն աշխարհայացքն են արտահայտում:

Գրողներ կան, վորոնք շարունակ միևնույն կախարդական շրջագծի մեջ են դառնում, չկարողանալով դուրս գալ այդ փակուղուց:

Ըստ Արսեն Տերտերյանի, Նար-Դոսը իր ամբողջ գրական գործունեությունը ընթացքում «չկարողացավ իր թաղի սահմաններից շատ հեռու գնալ, նրա Շահյաններն ու Բագենյանները նույն թաղի ինտելիգենտներն են իրենց կացություն և մտածողություն բովանդակությամբ» (Նար-Դոս «Մեր թաղը», գրախոսական Ա. Տերտերյանի, էջ 5):

Մինչդեռ Ծ. Թորգոմյանը հարաճուն շարժման յենթակա, կենդանի և հառաջադիմող մի գրող է:

Բազմաթիվ տիպեր և տիպեր, սոցիալական ամեն խավերից մարդիկ են ներկայացված նրա գրվածքներում, վաճառական, բանվոր, գործարանատեր, զինվորական, գյուղացի, ուսուցիչ, կոմյերիտ, վորոնք բոլորն էլ «խորհրդային պրիզմայից» են դիտվել:

Հասարակական խոշոր նշանակություն ունեցող պրոբլեմներ է արծարծում նա իր պատմվածքներում: Նրա բազմաճյուղ գրականության շենքի հիմքում պատերազմ և պատերազմի հետ հարակից խնդիրներ են շոշափված:

Յեվրոպական գրականության մեջ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո, առաջյեկավ մի հսկայական գրականություն, վոր պատերազմի ու հեղափոխություն անցքերով և պրոբլեմներով է լեցուն:

Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլանը և Հենրի Բարբյուսը Ֆրանսիայում. Կլեմանը, Ֆ. Յունգը, Գ. Բրանդենբուրգը և Րեյզերը Գերմանիայում ու Ջեյկ Լոնդոնը Ամերիկայում:

Սրանք բոլորն էլ ձգտել են տալ գեղարվեստական պատմությունը վերջին տարիների:

Մեր մեջ էլ յերևան յեկան գրողներ, վորոնք փորձում են տալ պատասխան այդ հարցերին իրենց ստեղծագործություններին մեջ:

Ս. Զորյանի «Պատերազմը», Դ. Դեմիրճյանի

«Պատերազմի դաշտում» և Յե. Չարենցի «Յերկիր Նայիրի»-ն, մի-մի գեղարվեստական դոկումենտներ են մեր վերապրած ժամանակների:

Սակայն դրանցից առաջ Ծ. Թորգոմյանն արտահայտվեց, ցույց տալով իր վերաբերմունքը դեպի պատերազմը:

Համաշխարհային պատերազմը միանգամայն տարբեր խնդիրներ և պնդելներ ստեղծեց մեզ, հայերիս համար: 1914 թիվը նորից հրապարակ դրեց հինավուրց Ռուսաստանի հարցը, այն Ռուսաստանի, վորին ավանդորեն Քեռի էյինք անվանում:

Հորիզոնի վրա, սահմանում, նորից գծագրվում է կապուտաչվի, շիկահեր դյապյայի հեքյաթային պատկերը: Ռուս-հայկական փոխհարաբերությունները մեր պատմության ամենաբարդ և ամենակնճոռոտ հարցերից են յեղել: Այդ խնդրի լուծմանն է նվիրված Ծ. Թորգոմյանի «Քեռին» պատմվածքը («Գործ» ամսագիր № 11—12):

Ենտուզիազմի և վոզևորության տարիներ էյին հայկական նացիոնալիզմի համար: Լեզենդական գույներով էյին պատկերացնում Քեռու սիրագործու թյունները և հզորությունը: Արևելյան պատերազմից հետո Ռուսաստանի հմայքը գնալով բարձրացավ և անցնելով տաճկահայերի «պրիմիտիվ մբոնոպոլիտյան սահմաններից», գերբնական,

ավելի շուտ Ֆետիշական կերպարանք ընդունեց: Ինչ վոր մեսիանիզմի բանդագուշանքներ և ուտոպիաներ էյին տածում դեպի «քեռին»: Խորհրդավոր գաղանիքներ էյին կապում մեսիայի գալստյան հետ: Այդ մեսիայի առաքելությունը կայանում էր նրանում, վոր քեռին հայերից թագավոր պիտի նստացներ Արժրունիների թափուր գահի վրա...

Տիպիկ է այն խուսակցությունը, վոր տեղի յե ունենում գրվածքի հերոսների՝ Սիրվարդի և Լուսիկ տատիկի միջև:

— «Մամա ջան, Քեռին ինչ հավատի յե:

— Մեզ նման քրիստոնյա յե, անուշ, մեզ պես խաչապաշտ:

— Քեռին յեթե գա հայերս թագավոր պիտի ունենանք:

— Ինչպես չե, ջանս, անշուշտ պիտի ունենանք:

— Ո՞վ պիտի լինի արդյոք մեր թագավորը, մամա ջան:

— Ով վոր շատ խելացի յե»:

Ի՞նչ են ասում Սիրվարդի և տատիկի ես պարզամիտ խոսքերը. նորագույն Փորմուլայի վերածելով, դա նշանակում է, վոր ամբողջ ժողովրդին ազգային գերիշխանության և պետականության գաղափարներով էյին անուցանում: Այստեղ արտացոլում է վոչ թե վանի ժողովրդի, այլ ու-

սահայերի տիրապետող դասակարգերի իղիղու-
ղիան:

Տնտեսապես և տեխնիկապես հետամնաց մի
յերկրում, ուր ազգաբնակչության բացարձակ մե-
ծամասնությունը աղքատ և միջին գյուղացիու-
թյունն էր, իսկ քաղաքներում վոսկերիչներ, փո-
րագրիչներ և մանր արհեստավորություն, «Ծեթ
ծախող Ակոններ» ու «Ծուռ Վոսկոններ», վորոնք
չէին կարող քաղաքական մի այդպիսի խոշոր
խնդիր դնել և վճռել:

Նրանք զլուխ չունեին դրա համար: Դա չէր
բղխում նրանց տնտեսական կառուցվածքից: Որեկ-
տիվ պայմանների չգոյությունը, ֆիկցիա յեն
գարձնում այդ խոսքերը Լուսիկի բերանում:

Համարյա նատուրալ տնտեսության շրջանում
ապրող թրքահայ ժողովուրդը, վոր, Ս. Խանոյանի
սրամիտ խոսքերով, «թեյը վորպես ճար էր գոր-
ծածուն», արտուրդ է թվում իր հեղեմանիայի գա-
ղափարը: Տվյալ շրջանի սոցիալական խավերը շա-
հագրգոված չէին այդ գաղափարներով: Այդ մարդ-
կանց հետաքրքրում էր միայն խաղաղ կյանք, վոր
մերթ ընդ մերթ խզվում էր իմպերիալիստների
խնորհիվներով և ուս-թրքական պատերազմներով:

Յերկրի բնիկները շատ ավելի ուսուցիտ էին:
Յեթե ուսահայ հասարակական միտքը Գամառ-
Քաթիպայից սկսած մինչև Գ. Արծրունին և Ա. Ահա-

րոնյանը, շարունակ պտույտ էր գալիս այդ հարցի
շուրջը, ապա տաճկահայ ժողովրդի համար խորթ
և ոտար էին քաղաքական այդ ֆանտաստիկ ծրա-
գիրները:

Ռուսահայ յերիտասարդ բուրժուազիան ճա-
նապարհ էր վորոնում, ուզում էր ընդարձակել
իր շուկաները, «ծովից ծով» հասցնել և ահա մեր
գրողներն սկսում են արձագանք տալ, ցոլացնել
իրենց գրվածքներում տիրող դասակարգի տեն-
դենցները: Տասնյակ տարիների համառ աշխա-
տանքից հետո, նրանց հաջողվում է բեկում ա-
ռաջ բերել տաճկահայերի շրջանում, և յենթար-
կել «պայմանական ստի»:

Ռուսական «հզորությանը» վերագրում էին
այնպիսի առաքինություններ և բարեմասնու-
թյուններ, վորոնք տրամագծորեն հակառակ էին
իմպերիալիստական մոլուցքով բռնված ցարական
իշխանության: Դասակարգային մոտիվներով չէին
բացատրում, այլ «բարի», «առաքինի», «քրիստո-
նյա» մորալով էին սվաղում ուսական և հայկա-
կան իմպերիալիզմը:

Ռուսական «հզորությունը» չէր թողնում
ըմբռնել իրերի փոխհարաբերությունը, ուստի հայ-
կական բարեկամության հիմքը և Քեոու ջենտլ-
մենությունը:

Անասելի հմայք և պաշտամունք ուներ «Քե-

ոին»։ Ծ. Թորգոմյանը փշրում է այդ կուլտը Սիրվարդի բերանով։ Յերկար չի տևում «Քեռու» մեղրամիսը։

«Ինչպես վոր Քեռին հանկարծակի յեկած եր Վան, մի որ ել կայծակի արագությամբ Վանից խույս տվեց։ Այն ժամանակ, յերբ ամայանում և դատարկվում է Վանը, ներս է ընկնում ոռու սպան, այն սպան, վոր կողակների գլուխն անցած հաղթականորեն արշավում եր փողոցով։ Բռնում է Սիրվարդի փափկունակ թևից. սկսվում է ահուկի մենամարտ։ Տղամարդու գազազած ուժը հաղթում է վերջապես կանացի տկար գորության...»

«Վայ, մամա, յիլիր տես, Քեռին յեկել է ու ինչ է անում մեզ. մամա, մամա, ես ե՞ք սպասած և յերագած Քեռին։ Վոտքը կոտրեր թող չըգար»... («Գործ», էջ 48)։

Այստեղ վերջանում է պատկերը։

Վոչ մի բարոյախոսություն և ճառախոսություն հեղինակի կողմից ժուժկալ է. ա մեն ինչ ասված է։

Ռուսական «հզորությունը» և նրա անասելի հմայքը փշրված է այստեղ։ Դեռևս են ժամանակ՝ յերբ մասսաների մեջ ուժեղ եր «Քեռու» պաշտամունքը, Ծ. Թորգոմյանը առաջինն ըմբռնեց ոռուսական իմպերիալիզմի բացասական դերը, մերկացրեց նրան։ Պոկեց Քեռու վրայից թզենու տե-

րեը, ցույց տվեց նրա գարշելի պատկերը և նրա առասպելական հզորության սնանկությունը։

2.

Գաղթը և նահանջը պատերազմի անխուսափելի հետևանքներն են։ Ամեն անգամ, յերբ տեղի յե ունեցել ոռու-թրքական պատերազմը՝ մի համատարած գաղթականական շարժում ծայր է տվել Թրքաց-Հայաստանում։

Մեր պոետներից և արձակագիրներից շատերն են արձագանք տվել, իրենց ստեղծագործությունների նյութը դարձրել այդ արյունոտ եղբրը, պատկերացրել մռայլ և դաժան տեսարաններ։ Վրեժը, ազգային ատելությունն են յեղել տիրապետող մոտիվը այդ գրականության։

Նույնիսկ մեզանում մի ամբողջ գրական շկուլաստեղծվեց, վորին ահարոնյանիզմ կարելի յե անվանել։

Սակայն 1914 թվին տեղի ունեցած անորինակ ջարդերը և մասսայական տեղահանությունը թրքահայ ժողովրդի՝ գերագանցում են մինչ այդ յեղած բոլոր արյունոտ եղբրը. նրանց առջև նսեմանում են 90-ական թվականները։

Ազգային թշնամությունն իր գենիթին եր հասնում։ Սակայն, ի պատիվ Ծ. Թորգոմյանի, պիտի ասել, վոր նա չտարվեց այդ հոգեբանությամբ,

չգնաց հոսան ի հետ, չվարակվեց վրեժի և հատուցման զգացումներով:

Այժմ, Հոկտեմբերյան Հեղափոխութեան տասնամյակին, յերբ միջազգային գաղսփարները միևուր արյուն են դարձել, ամեն մի մարդու համար շատ տարրական բան է թվում սա. բայց մի տասնամյակ առաջ, յերբ մեր յերկիրը ազգային կռիվների մի թեժ կաթսա յեր ներկայացնում, յերբ մթնոլորտը նացիոնալիզմի թուշնով եր բռնված, յերբ ծխացող ավերակներն էլին ամեն տեղ, հրդեհված քաղաքներ ու գյուղեր, դժվար, շատ դժվար եր ազատագրվել այդ հաշիշից:

Շատ քչերն էլին կարողանում գուրս գալ թունավորված մթնոլորտից:

Այդ քչերիցն է և Ծ. Թորգոմյանը:

Նրա «Աայլ : պան Ոնանը» մի փոքրիկ պատմվածք է գաղթականական կյանքից:

Ոնանը իր յեզների և սայլի հետ ձուլված ապրում է իսրայել: Մի որ լսում է, վոր գաղթականները թափվել են մոտակա քաղաք, անողնական և լքված վիճակում: Ոնանը վորոշում է ոգնութեան գալ իր իսեղճ յեզբայրներին և սայլի քիթն ուղղում է քաղաք: Նրան վիճակվում է մեռած գաղթականների դիակները սայլով փոխադրել գերեզմանատուն: Այդ ծանր աշխատանքը անխոնջ կատարում է նա: Բայց մի անգամ իրիկնասպա-

հին, գերեզմանատան ճանապարհին, հանկարծ էր կռնակին զգում է դիակների խլրտում, զգում, վոր դեռ չմեռած մարդկանց տանում է թաղելու: Այս սարսափելի միտքը շանթահար է սնուցում նրան և նա սայլը թողնելով, գլուխը բռնած, վազում է խավարի մեջ, անհայտ ուղղութեամբ...

Հեղինակը քաղաքականութեամբ չի զբաղվում այստեղ: Նա ընթերցողի ուշադրութեանը կենտրոնացնում է վոչ թե արտաքին, այլ ներքին թշնամու վրա: Յեթե «Բեռն» գրվածքում նա մերկացրեց ցարական վիթխարի ուժի սնանկութեանը, ապա ներկա գեպքում մեր ազգային շուշերի քաղաքականութեանն է մերկացված:

Այդտեղ է ուղղված հարվածը:

Այն մարդիկ, վորոնք հայոց թագավորութեանը վերականգնելու մասին էլին յերազում, վարչական պոստերը և պորտֆելյները բաժանում ծովից-ծով Հայաստանի, անկարող գտնվեցին սակայն, այդ ֆանտաստիկ յերազների զոր գնացող ժողովրդի մեռելների թաղման գործն իսկ կագմակերպելու:

Ծերուն Թորգոմյանը մի փոքր բարձրացնում է վարագույրը այն տխուր պատմութեան՝ վոր մեզանում «գաղթականական» ընդհանուր անունով է հայտնի:

Վերջի վերջո Յեղբայրական Ոգնութեան և

Ազգային Խորհրդի ֆոնդերը չեյին, վոր ոգնեցին «Մայր աթոռի» պատերի տակ մեռնող ժողովրդին: Պետք յեղավ սայլապան Ոհաններին իրենց յեզներով ոգնության հասնելու իրենց տառապող յեղբայրներին:

Ոհանը բարի, զգայուն, սրտացավ գյուղացու տիպ է, հումանիստական մեծ բնազդով ոժտված: Քաղցրության և մտերմության շնչով է տոգորված այս պատմվածքը:

Ոհանը սիրում է իր գաղթական յեղբայրներին, խառնում է իր հոգին նրանց կյանքին և ցավերին...

«Լաչակս գլխիդ լինի թող» մի պատկեր է դարձյալ գաղթականական շրջանից առնված:

«Փախստականների խուռն բազմությունը հողմակոծ տերևների պես հեասպառ ու ցանուցիր, շտապում եր վորչափ կարելի յե շուտ ազատվել այդ ստվերախիտ, ահալի ձորից: Նրանց հըրկիղված, խոշտանգված դեմքերը, փոշեպատ, գըզգըզված մազերը, կիսամերկ, վոսկրացած մարմինները ցույց եյին տալիս, վոր նրանք հեռավոր վայրերից են գալիս»... (Ծ. Թորգոմյան, «Յերկերի ժողովածու», էջ 23):

Ընդհատում եմ ցիտումը:

Ինչպիսի շնչով սկսում է պատկերը, նույն շնչով ել գնում է մինչև վերջը: Պատկերները

մռայլ են, գույները խտացած, վոճը ծանր ու դանդաղ, միանգամայն համապատասխան ընտրած թեմային:

— Թող մեր տուն քանդողը կանգուն չմնա. ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար ես որին գեցեցին մեզ. աշխատանքով ու քրտինքով ապրող ունչպար մարդ, եսոր մալ տավարը թողած, բնավեր հավքի պես կըոչենք առանց հաշիվ տալու... (ibid, էջ 24). Խոսում է գյուղացի Հարութը: Դառն հիասթափության և գանգատի ճիչն է թռչում նրա բերանից: Քննադատական վերաբերմունք է ցույց տալիս գյուղացին դեպի ժամանակի պատմական անցքերը և իր բողոքն արտահայտում:

Ծերուն Թորգոմյանը միայն խարազանելով չի բավականացել: Նա ցույց է տալիս այն ուղին, վորով տարբեր ազգության պատկանող մարդիկ կարող են ապրել հաշտ ու խաղաղ: «Հարևաններ» գրվածքով ազգերի համերաշխության ջատագովն է հանդիսանում նա: Վոչ թե «Քեռի»-ներն և իմպերիալիստներն են, վոր ազգությունների բախտը պիտի անորինեն, այլ փոխադարձ հասկացողությունը, բարեկամությունը և աշխատակցությունը:

Սյն ինչ վոր չկարողացան վճռել Վերսայն ու Սևեռը, լուծում են Հասոն ու Սերոբը—աշխատավոր գյուղացիներ, խորհրդային դաստիարակություն ստացող մարդիկ:

Ազգային Խորհրդի ֆոնդերը չեյին, վոր ոգնեցին «Մայր աթոռի» պատերի տակ մեռնող ժողովրդին: Պետք յեղավ սայլապան Ոհաններին իրենց յեզներով ոգնության հասնելու իրենց տառապող յեղբայրներին:

Ոհանը բարի, զգայուն, սրտացավ գյուղացու տիպ է, հումանիստական մեծ բնազդով ոժտված: Քաղցրության և մտերմության շնչով է տոգորված այս պատմվածքը:

Ոհանը սիրում է իր գաղթական յեղբայրներին, խառնում է իր հողին նրանց կյանքին և ցավերին...

«Լաչակս գլխիդ լինի թող» մի պատկեր է դարձյալ գաղթականական շրջանից առնված:

«Փախստականների խուռն բազմությունը հողմակոծ տերևների պես հեասպառ ու ցանուցիր, շտապում եր վորչափ կարելի յե շուտ ազատվել այդ ստվերախիտ, ահալի ձորից: Նրանց հըրկիզված, խոշտանգված դեմքերը, փոշեպատ, զըզզըզված մաղերը, կիսամերկ, վոսկրացած մարմինները ցույց եյին տալիս, վոր նրանք հեռավոր վայրերից են գալիս»... (Ծ. Թորգոմյան, «Յերկերի ժողովածու», էջ 23):

Ընդհատում եմ ցիտումը:

Ինչպիսի շնչով սկսում է պատկերը, նույն շնչով էլ գնում է մինչև վերջը: Պատկերները

մռայլ են, գույները խտացած, վոճը ծանր ու դանդաղ, միանգամայն համապատասխան ընտրած թեմային:

— Թող մեր տուն քանդողը կանգուն չմնա. ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար ես որին գցեցին մեզ. աշխատանքով ու քրտինքով ապրող ունչպար մարդ, եսոր մալ տավարը թողած, բնավեր հավքի պես կքոչենք առանց հաշիվ տալու... (ibid, էջ 24). Խոսում է գյուղացի Հարութը: Դառն հիասթափության և գանգատի ճիչն է թռչում նրա բերանից: Քննադատական վերաբերմունք է ցույց տալիս գյուղացին դեպի ժամանակի պատմական անցքերը և իր բողոքն արտահայտում:

Ծերուն Թորգոմյանը միայն խարազանելով չի բավականացել: Նա ցույց է տալիս այն ուղին, վորով տարբեր ազգության պատկանող մարդիկ կարող են ապրել հաշտ ու խաղաղ: «Հարևաններ» գրվածքով ազգերի համերաշխության ջատագովն է հանդիսանում նա: Վոչ թե «Քեռի»-ներն և իմպերիալիստներն են, վոր ազգություններ ըլին բախտը պիտի անորինեն, այլ փոխադարձ հասկացողությունը, բարեկամությունը և աշխատակցությունը:

Սյն ինչ վոր չկարողացան վճռել Վերսայն ու Սևեռը, լուծում են Հասոն ու Սերոբը—աշխատավոր գյուղացիներ, խորհրդային դաստիարակություն ստացող մարդիկ:

— «Անուշ արա, յուզաշ, բեղամաղ մի անի. գիտե՞ս վորքան լավ է, յերբ մարդը մարդու, ռանչպարը ռանչպարի քոմակ է անում, յերբ հայի և թուրքի մեջ խտրութիւն չկա. թե չէ, իրար տունը քանդելով մարդ չենք դառնա»... ասում է Սերոբը (տես, «Հարեաններ» պատմվածքը):

— «Մեր մեջ խտրութիւն գցողը մեր են առաջին դուշմանն ա: Մեզ հարկավոր ա բարի հարեանութիւն, իրար քոմակ պիտի անենք, վոր շունչ առնենք, ապրենք»... դամ է պահում Հասոն:

Փոխադարձ անկեղծ բարեկամութիւն և վրատահութիւն. ահա տիրապետող մոտիվը «Հարեւաններ»-ի:

Ընթերցողը հեշտութեամբ կնկատի, վոր Ծ. Թորգոմյանը «Քեռին», «Սայլապան Ոհանը» և «Հարեաններ» գրվածքներում ցույց է տալիս ժխտական վերաբերմունք դեպի բուրժուական իդիոլոգիան, նա չի գնում հին, փոշոտված և կոխոտված ուղիներով: Հեղինակը ցույց է տալիս նոր ճանապարհ:

Հինգ թեանի հզոր աստղն է լուսավորում այդ ուղին: Ազգերի համերաշխութիւն, աշխատակցութիւն, փոխադարձ ոգնութիւն:

Դա յէ միակ ուղին...

IV

ԿԻՆԸ ՅԵՎ ՍԵՐԸ Ծ. ԹՈՐԳՈՄՅԱՆԻ ՅԵՐԿԵՐՈՒՄ

1.

Յեթե սոցիալ-քաղաքական խնդիրներում և աշխարհայեցողութեան մեջ, Ծ. Թորգոմյանը պահեց իր լոյալութիւնը, չգնաց հոսանքի հետ, ընդհակառակը, կենսահայեցողութեան զավառում յերևան է գալիս վորպէս մանր բուրժուական մտայնութեան և ապրումների տիպական արտահայտիչը:

Այսպիսի գրվածքներից են «Առաջին ձյուն», «Անթառամ ծաղիկներ» և «Կին մը»: Վերջին յերկուսը տպված են Բագվի «Գործ» ամսագրում:

«Անթառամ ծաղիկները» Ծ. Թորգոմյանի ամենախոշոր վեպն է, վոր լույս է տեսել մինչև հիմա. իսկ «Կին մը» և «Առաջին ձյունը» փոքրիկ նորավեպեր են:

«Կին մը» պատմվածքում հեղինակը մի առանձին բավականութեամբ է նկարագրում կոկետուհի Ոլիային. նրա «սպիտակ ձեռները», «գեղաշեն մարմինը» հուզում են նրան .. Առանձին ուժ և թափ էս զգում այնտեղ, ուր Ծ. Թորգոմյանը «հո-

լանի լանջեր», «վողորկ մարմիններ» ե պատկերացնում: Նրա գրիչը թռչում է, յերբ բաց է անում ձեր առջև բուրժուական կյանքից տեսարաններ.

— «Իրցուհու մը պես կքալեր ան, ու մեր քովեն անցնող ամենահասարակ ու կեղտոտ մարդիկ (ընդգծումն իմս է, Մ. Բ.) անգամ պետք կգզային պահ մը կանգ առնել, նայել նրա յետեկից»... հոխորտում է նա:

Չի լինի իմանալ, թե եդ ինչ «կեղտոտ» ու «հասարակ» մարդկանց մասին է խոսքը:

Ամենաշաբլոնն և վուլգար խոսակցությունն է տարվում Ուիայի և իր սիմպատիայի միջև.

— «Այսպես ուրեմն, դուք ամուրի յեք. այդ լավ է. խելացի յե չամուսնանալ և ազատ մնալ ամեն կապերից, ազատ ինչպես յերկնքի թռչուն... Ամուսնացար թե չե, կնշանակե վտարդ թակարդի մեջ դրիը, յեղար մեկի քմահաճույքին գերի, իսկ յեթե դժբախտություն ունեցար գավակներ ունենալու, սի, աստված իմ»...

Ահա ձեզ թեթևաբարո մի կնոջ տիպ:

Իսկ ինչ հոգեվիճակ է սպրում իր սիմպատիան.

— Չգացումն է միայն գերիշխողը. խանդոտ ու մրրկաչունչ զգացումը, վոր հրաբուխի մը պես կը ժայթքե և տաք լավայով մը կը վարարե եյությունդ...

Յերկուսն ել իրար արժեն:

Յերկուսն ել նույն ճաշակն ունեն:

Վայելքից հետո լսեցեք պարոն կավալերի հոխորտանքը.

«Յեղնիկ վորսացող կտրիճ վորսկանին հպարտությունն ունեյի յես»...

Մի առ ժամանակ նրանց հանդիպումներն ուշանում են ու մեր Սանին ազդակում է կրքից վառված.

«Յես կը նմանեյի անապատին մեջ մուրված մենավոր և սաստկորեն ծարաված ճամբորդի մը, վոր ման կուգա պուտ մը ջուր գտնելու և ինքզինքը կուտե իր անավոր պապակը հագեցնելու համար»...

Արցիբաշկյան և Սոլոգուբյան երոտիզմն է բուրում ամբողջ գրվածքից: Շվայտ և ցոփ կյանք է պատկերացված այստեղ:

Պատերազմի տարիներին՝ բոլոր յերիտասարդ և կենսունակ տարրերը ճակատն եյին ուղարկված, իսկ թիկունքում, խոշոր քաղաքներում, մնացել էյին բուրժուական տարրեր, վորոնք հղիացած պատերազմի յեկամուսններից՝ լողում էյին անառակության մեջ:

Բուրժուազիան ավարտելով իր պատմական առաքելությունը, ընկնում է դեկատանսի մեջ: Ախ-

տավարակ և ախտաբորբոք հաճույքների մեջ և վորոնում իր բավականությունը:

Կինը և կնոջ վայելքն և իմաստավորում նրա դատարկ կյանքը:

2.

Մակայն, Ծ. Թորգոմյանը շուտով հիասթափվում է զգայականության աշխարհից: Կրքեր և սեռային եքստազ նկարագրելու ընդունակությունն ցույց տվողը՝ ավելի վարպետ է հանդիսանում ռոմանտիկ սիրո իդիլիան հյուսելու ընթացքին:

«Անրառամ ծաղիկները», անթառամ, հավերժական սիրո մի վիպերգ է, արձակ մի հիմն նվիրված յերազային սիրո:

Վաճառական Մարգարյանը իր դիրքի և հարստության շնորհիվ՝ կնության և առնում Աստղիկին. պարզ, զեղանի և առանց սեթևեթի մի աղջիկ: Բայց վերջինիս սիրտը ձգվում է զեպի Գուրգենը, իր մանկության և պատանեկության քաղցր օրերի ընկերը: «Գուրգենի մտապատկերը վերընձյուղում էյին համառորեն իր տխրության և մենության ժամերին, մխում չմարած կայծերի պես և իր աչքերը լեցնում հորդ արցունքներով: Կրճքին եր սեղմում խանդաղատանքով նրա նվիրած ծաղկեփունջը, վոր յերկար տարիների ըն-

թացքին, տակավին թարմ, անուշահոտ և անթառամ կմնար նրա համար»:

... Մետաքսյա վարագույրների յետև և այդ ծերացած ու շահասեր վաճառականի գրկին՝ փակ պահած եր իր հոգու ամենեն զեղեցիկ մասը, պահած եր անմերձենալի, թանկագին մի մասունքի պես նվիրական, պահած եր մի որ բանալու համար, ճիշտ այն ծաղիկների պես, վորոնք գիշեր ժամանակ իրենց փակած թերթիկներն են բանում առավոտյա լույսի և ցողի առջև»:

Յերիտասարդ կինը հասնում է իր սիրածին. Բայց յերկար չի տևում նրանց հրճվանքի մեղրամիսը: Պատերազմը ֆրոնտն է նետում Գուրգենին: Ապա, տարիներ հետո մենք տեսնում ենք Գուրգենին ինվալիտ դարձած:

«Պառկած է նա մահճակալին վրա. Աստղիկը նստած է կողքին: Մերթ ընդ մերթ նայում է նա դեղնած ու հյուժված դեմքին, շրթունքների մեղմ սրսիվներին, ունկնդրում նրա շնչառության ծանր ձայնին...»

«Այդ պահին Աստղիկի հոգու մեջ տեղի յե ունենում ծանր, վճռական մի պայքար: Հանկարծ յերկու կաթիլ արցունք փայլեցին արտևանունքների վրա: Նա կոացավ կամաց և համբուրեց Գուրգենի անթարթ շրթունքները: Գուրգենն աչքերը բացավ, շրթունքների վրա շողաց փայլուն

մի ժպիտ, և վոչ միայն շրթունքները, այլ իր դեմքի բոլոր գծերը, իր բովանդակ եյությունը շողաց ու լեցվեց այդ ժպիտով...

Գեղեցկություն, բանաստեղծություն և ցընորք կա Մ. Թորգոմյանի այս գրվածքում: Աստղիկի հոգին չիքն է բանաստեղծական յերազանքներով:

Բայց մի տեսակ միտում կա հեղինակի կողմից գեղեցկագույն մի ֆինալով փակելու վեպը:

Հանճարեղ քննադատ Իպոլիտ Տենը պիտի ասեր նման գեպքերում. «Աստղիկը հիանալի կին դարձավ, բայց փշացրեց հիանալի մի վեպ»:

Գրվածքն ավելի արժեքավոր են դարձնում պատերազմի, ժողովրդական պոթկումների և անցքերի նկարագրությունները:

Դուք ականատես եք լինում, թե ինչպես խանութները հսկայական ապակիները փշրվում են շրխկալեն նետովոց քարերից և բուռնցքներից, դուք տեսնում էք ծովացող կանանց և թոկից փախած պատանիների խուժումը, փուռերի առջև հերթի կանգնած անվերջանալի «պոչերը», խանութների թալանումը, դարակների և սեղանների ջարդ ու փշուր լինելը:

Վեպը լի յե նման շարժումներով և տեսարաններով:

«Անթառամ ծաղիկները» Մ. Թորգոմյանի սկզբնական գործերից է և վորպես այդպիսին, կրում է իր վրա մի սկսնակի հատուկ թերություններ. շատ է ձգձգված, տիպերը ամբողջացած չեն:

Խոլորովին տարբեր բնույթ կունենար այդ գրվածքը, յեթե վերամշակության յենթարկվեր հիմա, մեջը դնելով նոր շունչ և բովանդակություն, Վորովհետև զարգանալու սղմեր կան մեջը:

Մենք սպասում ենք, վոր Մ. Թորգոմյանը մտտիկ ապագային սինթեզի յենթարկելով իր պատերազմի տարիներին հրատարակած յերկերը, տա մեզ մի համայնապարփակ գեղարվեստական գործ, վոր կլիներ մի կենդանի և արժեքավոր դոկումենտ՝ մինչ հոկտեմբերյան եպոխայի: Մ. Թորգոմյանը մեր վերլուծած գրվածքներում՝ թրքահայ է ըստ ձևի է ճաշակի: Յերկերը տաճկահայ բարբառով են գրված, բայց արևելահայ լեզուն արդեն թափանցել է սկսում նրա գրականության մեջ, թրքահայ կլասիկ լեզուն ավելի յե մեղմանում և պարզվում Մ. Թորգոմյանի գրչի տակ:

Այն ժամանակ թրքահայ յերիտասարդ գրողների շրջանում մի միտում կար—Անդրկովկասում զարգացնել քրահայկական մի առանձին գրականություն:

վեսպերը Միսակ Մեծարենցի մեղմալար տավիղն եր հնչեցնում:

Գ. Մահարին «Անտալուզյան գիշերներն» եր սկսել յերգել:

Լեռ Կամսարն, ուզում եր ժառանգորդը լինել Հ. Պարոնյանի:

Իսկ Ծ. Թորգոմյանն, ուզում եր անպատճառ գրավել իր հաստատուն տեղը պրոզայի ասպարեզում:

Մի տեսակ եկզոսիկ գրականություն եր դա, վոր ասլրեց մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Հեղափոխության կիզիչ արևի ճառագայթների տակ խամրեց և այդ գրականությունն ել:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲԸ ԴԵՊԻ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի խորհրդայնացումից հետո մի նոր դարազուլս ե սկսում մեր գրականություն պատմություն մեջ: Դա կազմում ե ջրաբաժան մի գիծ, վոր գատում ե հին և նոր գրականությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը հրապարակ ե հանում բանվոր դասակարգին և աշխատավորական լայն զանգվածներին: Նրանք նոր խնդիրներ և պահանջներ են առաջադրում գրողներին և պատասխան պահանջում:

Նոր հասարակությանն այլևս չի բավարարում այն ավանդական գրականությունը, ուր միայն բուրժուազիայի պատկերն եր ցուանում, հարձի պես ծառայելով նրա կարիքներին և բմահաճույքներին:

«Մարդը չե շաբաթվա համար, այլ շաբաթն ե մարդու համար». ասում ե Վորոնսկին. յեթե հեղափոխությունը ծառայումե միլիոնավոր մարդկանց շահերին, նույն ծառայական դերը պիտի կատարի նաև գրականությունը: Բեկում ե կա-

տարվում գրողներին շրջանում: Նրանք փորձում են ցուցադրել նորը, արտահայտիչ լինել դասակարգային կուլին, ինչպես Սուբխաթյանն է ասում «դասակարգային պայքարի պրիզմայից դիտել մեր իրականությունը»:

Այս կամ այն հարցի առթիվ ցույց պիտի տալ շեշտված վերաբերմունք. աջ կամ ձախ պիտի գնալ: Այո կամ վոչ պիտի ասել: Թեք կամ դեմ պիտի լինել: Չկա միջին ճանապարհ: Չկա նախկին ֆլեկմատիկ վերաբերմունքը:

«Գրականությունը մոտենում է քաղաքականության». գրում է ռուս ժամանակակից քննադատ Ս. Կոզանը «Литература этих лет» գրքի մեջ:

Ինչպես քաղաքական ասպարեզում, նույն և գեղարվեստի մեջ, առաջին պլանի վրա յե քաշվում այն հարցը, թե տվյալ գրողը ի՞նչ դիրք է բռնում գեպի հեղափոխությունը: Ի՞նչ մոտեցում ունի դեպի անցյալը և գեպի ներկան: Արդյոք կարողացել է թափանցել մեք խորհրդային իրականության խորքը, կարողանում և նկատել այն հակասությունները, վորոնք գեռ ևս շեշտվում են նեպամանական այս անցողիկ շրջանում:

Ս. Զորյանը, Դ. Իեմիրճյանը, Վ. Թոթովենցը ավելի շուտ վորոշեցին իրենց գիրքը: Նրանք խուսյն անցան Ռուբրիկոնը:

Մի քանի տարվա լուսթյունից հետո, ուժեղ թափով խոսում է նաև Ծ. Թորգոմյանը:

Նրա ուշանալը հասկանալի յեր:

Հեղափոխությունից առաջ գաղութահայ կենդրոններն եյին, վոր դեկավարում, տոն եյին տալիս մեր գրականության, Թիֆլիս, Մոսկվա, Պոլիս:

Մորհրդայնացումից հետո, դերերը միանգամայն փոխվում են: Հայաստանի մայրաքաղաք — Յերևանը դառնում է աննախընթաց կուլտուրական մի կենտրոն: Գրականությունը, թատրոնը, յերաժշտությունը և գեղարվեստի մյուս ճյուղերը փայլուն նվաճումներ են անում այնտեղ:

Մեր ուղեկիցներն ապրելով մի այդպիսի առույգ է բուռն հոսանքի շրջանում, ազդվում են դրանից և ավելի շուտ դառնում նրա հավատարիմ կողմնակիցները, քան Ծ. Թորգոմյանը, վոր ապրում էր Թիֆլիսում: Այլևս սոցիալական մարդն է դառնում նրա ստեղծագործությունների թեման: Դասակարգային փոխհարաբերություններն են գրաղեցնում նրան:

Մալոններից իջնում է գործարաններ, ումանտիկ սիրո փոխարեն խորհրդային շինարարություն հիմն է յերգում: Վոչ թե շրջագգեստներ, այլ բանվորի մոխրագույն պլուզն են նկարագրում:

Գործարանատեր Միրզաբեգյանի դեմ գուրս է բերում մետաղագործ Ալեքսեյին:

Վաճառական Մարգարյանին հակադրում ուստա Մարգարը: Հին սերնդի ներկայացուցիչներ Մանուկյանների դեմ վոտքի յե հանում կոմերիտական աղջիկ Շուշանիկին:

Այդ տրամադրութիւնները սակայն նոր չըհայանաբերվեցին Մ. Թորգոմյանի մոտ: Հենց սկզբից մենք տեսանք, զոր նա հոսանքի դեմ գնաց («Քեռին»), «Սայլապան Ոհանը»):

Նրա մեջ կար այդ խառնվածքը: Դուրս գալով նահապետական մի միջավայրից, նա չկարողացավ հարազատանալ բուրժուական միջավայրին. Կարլ Ռադեկի խոսքերով, «արմատ չկարողացավ ձգել ասֆալտների մեջ»:

Հեղափոխութիւնից հետո ավելի բյուրեղացած է դրսևւորվում այդ տենդենցը:

Մ. Թորգոմյանը մի շարք գրողների նման յերկունքներ չապրեց: Չկանգնեց դիլլեմի առաջ, տատանումներ և վարանումներ անձանոթ մնացին նրա հոգուն, նա առանց դժվարութիւն և առանց ներքին պայքարի, ամուր վոտքերով կանգնեց հաստատուն հողի վրա:

Ականջ դրեց իրականութիւն ձայնին: Դիտեց նոր միջավայրը և այդ բոլորը վերարտադրեց իր գրվածքներում:

2.

Հյուսիսային կովկասում տեղի ունեցող քաղաքացիական կռիւներից առնված մի պատմվածք է «Ով է մեղավոր»-ը:

Մետաղագործ բանվոր Ալեքսեյի վորդիններն ընկել էյին սպիտակների դեմ մղած կովում: «Վանյան ու Միշան անշնչացած ընկել էյին փողոցի մեջտեղը, արյան փոքրիկ լճակներով վողողուն: Նրանց մարած աչքերում աղոտ մի ցոլք կար թառած, քիչ առաջվա կովի կատաղութիւն, թե մահվան սարսուռն արհամարհող ժպիտը...»

Ապա տալիս է Միշայի լերթացած արյան, ուղեղի դեղնավուն շերտերի և թրի հարվածներից շախշախված գլխի նկարագրութիւնը: Կարդալով այդ տողերը, վոչ թե գթասրտութիւն զգացումն է, վոր հուզում է ձեզ, այլ դասակարգային վրեժի ու հատուցման նոր կիրքն է խոսում ձեր մեջ: Յեվ հեղինակը շուտով բավարարում է ձեր նոր կրքերին:

Շքեղագարդ սեղանի մոտ, իր կարճիկ, կուզիկ մարմնով նստել եր Միրզաբեգովը, տերնայն գործարանի, վորտեղ քսան տարուց ավելի աշխատում եր Ալեքսեյը: Այժմ, ահա, սպիտակների քաղաքը վերագրավելուց հետո, առաջին

Վաճառական Մարգարյանին հակադրում ուստա Մարգարը: Հին սերնդի ներկայացուցիչներ Մանուկյանների դեմ վտաքի յե հանում կոմերիտական աղջիկ Շուշանիկին:

Այդ տրամադրությունները սակայն նոր չըհայտնաբերվեցին Մ. Թորգոմյանի մոտ: Հենց սկզբից մենք տեսանք, զոր նա հոսանքի դեմ գնաց («Քեռին»), «Մայրապան Ոհանը»):

Նրա մեջ կար այդ խառնվածքը: Դուրս գալով նահապետական մի միջավայրից, նա չկարողացավ հարադատանալ բուրժուական միջավայրին. կարլ Ռադեկի խոսքերով, «արմատ չկարողացավ ձգել ասֆալտների մեջ»:

Հեղափոխությունից հետո ավելի բյուրեղացած է դրսևվորվում այդ տենդենցը:

Մ. Թորգոմյանը մի շարք գրողների նման յերկունքներ չապրեց: Չկանգնեց դիլլեմի առաջ, տատանումներ և վարանումներ անձանոթ մնացին նրա հոգուն, նա առանց դժվարություն և առանց ներքին պայքարի, ամուր վտաքերով կանգնեց հաստատուն հողի վրա:

Ականջ դրեց իրականության ձայնին: Դիտեց նոր միջավայրը և այդ բոլորը վերարտադրեց իր գրվածքներում:

2.

Հյուսիսային կովկասում տեղի ունեցող քաղաքացիական կռիվներից առնված մի պատվածք է «Ուլ Ե մեղավոր»-ը:

Մետաղագործ բանվոր Ալեքսեյի վորդիններն ընկել էյին սպիտակների դեմ մղած կռվում: «Վանյան ու Միշան անշնչացած ընկել էյին փողոցի մեջտեղը, արյան փոքրիկ լճակներով վողողուն: Նրանց մարած աչքերում աղոտ մի ցուր կար թառած, քիչ առաջվա կովի կատաղություն, թե մահվան սարսուռն արհամարհող ժպիտը...»

Ապա տալիս է Միշայի լերթացած արյան, ուղեղի դեղնավուն շերտերի և թրի հարվածներից շախշախված գլխի նկարագրությունը: Կարդալով այդ տողերը, վոչ թե գլխասրտություն զգացումն է, վոր հուզում է ձեզ, այլ դասակարգային վրեժի ու հատուցման նախ կիրքն է խոսում ձեր մեջ: Յեվ հեղինակը շուտով բավարարում է ձեր նոր կրքերին:

«Շքեղագարդ սեղանի մոտ, իր կարճիկ, կուզիկ մարմնով նստել եր Միրզաբեգովը, տերն այն գործարանի, վորտեղ քսան տարուց ավելի աշխատում եր Ալեքսեյը: Այժմ, ահա, սպիտակների քաղաքը վերագրավելուց հետո, առաջին

անգամ լինելով ազատ շունչ ե քաշում: Մի տարի առաջ հավու պես վիզը կծկել էր, իսկ հիմա հագել էր լավագույն շորերը և գինի յեր կոնծում իր քսանամյա գեղաչվի կնոջ Մարիա Ստեփանովնայի հետ: Յերգում „боже, царя храни“...

«Բայց խրճիթում այլ կերպ են դատում, քան պալատում» — ասում է Ֆեյերբախը:

Մենք տեսանք վոր Մ. Թորգոմյանի «Անթառամ ծաղիկներ» և «Կին մը» գրվածքները լի էին շարժումներով և կրքերով:

Այժմ, հեղափոխությունը փոխում է զրանց ընթացքը, դնում նոր հունի մեջ: Այն կրքերը և զգացումները, վորոնք առաջ վարընքաց հոսանքով էին գնում, այժմ դառնում են առաջընթաց: Դա հեղափոխական պրոլետարիատի նոր վոգին է, նրա մարտական տրամադրությունը:

«Ալեքսեյի բարկության կայծը հրդեհ դարձած, այրեց ամբողջ եյությունը: Կուրծքը խփում էր մուրճի պես: Ինչպես գազազած վագր խոյացավ դեպի յերկրորդ հարկը, կնճռոտ, մազառատ դեմքին շառագույն բոց, աչքերն ուռած ու կարմիր: Հիսունհինգամյա այդ խաղաղ, աշխատասեր մարդը, վոր քառասուն տարի շարունակ գործարանների մրի և ծխի մեջ էր մաշել իր կյանքը, յեզան համբերությամբ, հանուն մի պատառ հացի, այժմ,

սանդուխի աստիճաններն էր բաձրանում հեապառ, ինչպես մրրիկն սպառնական ու անխորտակ...

Յեվ խաղեյինի անշնչացած դիակը փովում է գետնին:

Մեծ թափ և վճռականություն կա արտահայտված այս պատմվածքում: Հեղափոխական պրոլետարիատի վճռական տոնով է խոսում հեղինակը: Անխնա և աններող: Վոճը կտրուկ է և եներժիք, համապատասխան բանվոր դասակարգի դինամիկ գործողության:

Նորից մի անգամ հեղինակը ցույց է տալիս հեղափոխական անցքերն նկարագրելու մեծ կարողություն և շնորք:

Տարիների մաղձը, բուռն և անզուսպ ատելությունն է առաջ մղում Ալեքսեյին: Հանձինս Ալեքսեյի և Միրզաբեգովի ընդհարվում են յերկու դասակարգային հակառակորդները:

Այդ պայքարում խորտակվում է հարուստների դասակարգը:

Սպանվում է նաև Միրզաբեգովը:

Մեզ բավականություն է պատճառում նրա թավազրոր անկումը:

Պայքարող պրոլետարիատն աններող է և դատան դեպի Միրզաբեգովների դասակարգը: Քաղաքացիական կռիվների պատմությունը լեցուն է

հերոսացման անհամար դրվագներով և սխրագործություններով:

Հեղափոխութեան գեղեցիկ եջերից մեկն է կազմում «Ուլ Ե մեղավոր»-ը:

Նույն քաղաքացիական կռիվների շրջանից է առնված «Բորիս Չերաշեվը խրամատում»:

«Առողջ և չաղ ինչպես յեզ՝ ապրում է Բ. Չերաշևը իր ապարանքում, բայց բալշևիկները զրավում են նրա գեղեցիկ սենյակները և տալիս յերկու բանվոր ընտանիքի»:

Բայց այդքանով չեն բավականանում: «Մի որ ել բազմաթիվ քաղաքացիների հետ ուղարկում են քաղաքի անմաքրություններ մաքրելու, հետո հրամայում քաղաքի շրջակայքում խրամատ փորել...»

Յեզվ այն մարդը, վոր իր կյանքում բահի յերեսը չի տեսել, այժմ գետին պիտի փորի:

«Ախրը, ընկեր կոմիսար, յես հող փորել չեմ իմանում...»

Բորիս Չերաշևի այս դառն արտահայտութեան միջից՝ հեղինակի անասելի հրճվանքն ու լիաթոք ծիծաղն է յերևում, հանդես բերելով իր ժխտական վերաբերմունքը դեպի Չերաշևների դասակարգը:

Հետո, նա նկարագրում է, թե ինչպես Չերաշևը հուսահատորեն բահը կրկին ձեռքն է առնում

և իջնում խրամատ, վորովհետև կոմիսարը հրամայել էր:

«Մինչև չվերջացնեք, չեք գնա»:

«Յեզվ յեթե հուշակավոր Շեքսպիրը այդ վայրկյանին գլուխը գերեզմանից դուրս հաներ ու դիտեր նրան փոսի յեզերքին մտամոլոր ու գլխիկոր կանգնած, անպատճառ պիտի բացականչեր.

«Այս մարդը շատ ավելի յե մտածում ու տառապում, քան իմ Համլետը»...

Բայց նրա հուսահատությունն ու տառապանքը մեր կարեկցությունը չի շարժում: Վորովհետև հեղինակը համակրանքով չի նկարագրում «մսացու այդ յեզին», վորին աշխատանքի յեն լծում բալշևիկները:

Մեզ նույնպես հաճույք է պատճառում, յերբ վոր այդ պարագիտ տարրը աշխատում է, հող փորել սովորում մեր իրավակարգում:

Ուրհրդային մարդը և քաղաքացին վոչ մի տարրորինակ բան չեն գտնում այստեղ: Ինչո՞ւ չը պիտի աշխատեցնել Չերաշևներին, մանավանդ այն ժամանակ, յերբ խորհրդային իշխանութեան «լիսել չլինելու» հարցն էր դրված մեջտեղ: Դա բըղխում էր են ժամանակվա ռազմական կոմմունիզմի իրավական նորմաներից և մորալից:

Դա յեր թելագրում հեղափոխական դասակարգի ստրատեգիան:

2.

Քաղաքացիական կռիվներում պայքարը վերջացավ բանվոր դասակարգի փառավոր հաղթութեամբ:

Ազատված արտաքին ֆրոնտից, նա իր ուշադրութեամբ դարձնում է ներքին ֆրոնտի վրա, խորհրդային շինարարութեանը: Մի նոր քրտնաշան և տոկուն աշխատանք է սկսվում մեր գործարաններում:

Նոր տերեր, նոր մարդիկ — նոր հոգեբանութեամբ:

Ծ. Թորգոմյանը «Ուստա Մարգարի մամրտուքը» գրվածքում տալիս է խորհրդային բանվորի հարազատ պատկերը: Մենք տեսնում ենք բանվորի կյանքը, նրա ապրումները, նրա ջերմ վերաբերմունքը դեպի գործարան: «Ինչպիսի խանդաղատանքով գուրգուրում է նա խոշոր մեքենայի մրոտ դունչը, վորպիսի գուրգուրանքով է շոյում անիվները, կարծես իր հարազատ զավակները լինեն:

Վորքան բանաստեղծութուն կա և քաղցրութուն այս նկարագրութեան մեջ. —

«Կիսալույսում լապտերի աղոտ ցուրների տակ, նրա փալփուկ, խոշոր աչքերը հառել եյին մեքենայի մերկ, վոլործուն թեվերին, առնական ուժեղ լծակներին, ածխացած զրահապատ լանջին:

Ու նրանք մթութեան մեջ իրար ականջն ի վար փսփսում եյին, մեղմիվ շշնջում իրենց հուզերն ու մտորումները, ընկղմում մաքերի ծովը...

«Ով գիտե, քանի տարի, քանի գիշեր, այդպես հանդիպել ու նայել են իրար, ապրել նույն հուշերն ու յերազները, համակվել համատարած խաղաղութեամբ ու լուսութեամբ, ավելի ու ավելի մտերմացել ու ընտելացել, ըմբռնել լիովին իրենց արժեքն ու գոյութունը այս ազմկոտ աշխարհում»:

Հայրական անկեղծ գորովանքով է խոսում Մարգարը ճախարակների հետ:

— Իսկ դու, փոքրիկ. եղ ինչ խաղաղ նրնջում ես, հանգիստ քուն...

Անշունչ առարկաները, ածխացած լանջերն ու վոլործուն փոկերը լեզու յեն առնում Ծ. Թորգոմյանի գրչի տակ, խոսում ուստա Մարգարի հետ: Անլեզու իրերը լավ են հասկանում վարպետին, իսկ վերջինս ել նրանց:

Գործարանը նրա կյանքի բովանդակ իմաստն է կազմում: Նրա սիրտը ցավում է, յերբ մի պտուտակ է կորչում, նրա հոգին մղկտում է ցավալինորեն, յերբ մի բան է փչանում: Նա Ֆորդի և Մորգովի խիստ վերաբերմունք ունի բոլոր նրանց հանդեպ, վորոնք բարեխղճորեն չեն վերաբերվում դեպի մեքենան ու գործարանը:

Միայն խորհրդային հոգեբանութիւնն յուրացրած բանվորն կարող եր այսպիսի խանդաղատանքով նայել ազգայնացված գործարանին, և միայն խորհրդային կյանքով ապրող գրողը կարող եր տալ հարազատ պատկերը այդ բանվորի:

Պրոլետարիատն այսօր տեր է կանգնած մեր գործարաններին և արդյունաբերութեանը: Նա իր աչքի լույսի պէս է պահում բուրժուազիայից խլած հարստութիւնները:

Ուստա Մարգար ու Գործարան—սրանք մի կատարյալ ներդաշնակութիւն են կազմում:

Անկարելի յէ պատկերացնել խորհրդային գործարանները առանց այդ հավատարիմ գամբըռների:

VI.

ՀԱՅՐԵՐ ՅԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ

Հեղափոխութիւնների և կռիւների այս դարաշրջանում, պայքար է վոչ միայն սոցիալ քաղաքական ասպարիզում, այլ և պայքարի և ըմբոստութեան վողին թափանցել է նաև ընտանեկան խաղաղ կյանքը, մտել Մանուկյանների և Տեր-Սիմոնների անդորը հարկը:

Անտագոնիզմ է բացվել հայրերի և զավակների մեջ: Հեղափոխութիւնը խառնել է լեզուները: Բաբելոնյան խառնակութիւնն է աիրում տանը: Հայրերը չեն հասկանում իրենց վորդիներին, իսկ զավակները լսել անգամ չեն ուզում իրենց հորը:

Հեղափոխութիւնից ծնվել է մի նոր սերունդ — պիոներների, կոմերիտականների սերունդ, վոր ամեն տեղ հնի դեմն է ուղղված:

Քաղաքացիական կռիւների ճակատում պարտվեց բուրժուազիան չարաչար կերպով, բայց իդիոլոգիական և կուլտուրական կռիւի ֆրոնտում շարունակվում է ընդհարումը հազար ձևերով և միջոցներով:

Հինը չի գիշում հեշտությամբ:

Կուչ յեկած տանը, հին սերունդը փորձում է իր հոգևոր և մտավոր ազդեցության տակ պահել ու մեծացնել նոր սերնդին:

Սակայն կուլի բազմապիսի ձևեր գիտե խորհուրդների իշխանությունը: Աշխատանքային զբաղոցներ, կոլլեկտիվ կազմակերպություններ, հոկտեմբերիկ, պիոներ, կոմերիտ, բջիջ, պատի թերթեր, ֆիզկուլտուրա, ժողովներ, գեկուցումներ—բոլոր այս կուլտուրական ֆակտորները մի սերունդ են վինել և պատրաստել:

Ամեն քայլափոխում պայքար է տեղի ունենում, կուլտուրական պայքար:

Այդ պայքարի մի մասնիկն է ցուանում «Նախկին վաճառականի ընտանիքում» և «Տեր-Սիմոնը» պատմվածքների մեջ:

—Հըմ՛, տեսա՞ր ինչպես փոխվեց աղջիկդ. ո՞ւր է նախկին հեզ, համեստ Շուշանիկը: Կոմերիտ դարձավ թե չե հոգով սրտով փոխվեց, անվերջ գրում է ու կարդում: Ծուռախ-մուռախ բաներով է զբաղված: Գիշերներն ուշ է տուն գալիս: Ժողով ունի, գեկուցում: Այժմ ել վորոշել է գյուղ գնալ, գյուղացիների մեջ աշխատել...

Գանգատվում է նախկին վաճառական Մանուկյանը:

Մի գեղեցիկ առավոտ, գալիս է ավտոն: Աղ-

ջիկը պայուսակ ձեռքին, մազերը խուզած, գրխին կեպի, նստում և սլանում է դեպի կայարան: Յեվ հայրը նրա յետևից բացականչում է դառնացած, «գոնե մի հազար, յերկու հազար մանեթ ես գլխից տային...

Այսպիսով արտահայտում է «կապիտալի կուտակման» հին իր տենչը...

Իսկ «Տեր Սիմոն»-ի մեջ, Արտավազդն ըսկսում է ատելությամբ լցվել դեպի սև փարաջա հագած, մռայլ դեմքով հայրը, այն ուրից յերբ դպրոցում իմանում է, վոր իր հայրը պարագիտների և ձրիակերների դասակարգին է պատկանում:

Մենք ամեն տեղ տեսնում ենք, վոր զավակները ծառանում են իրենց հոր գեմ:

Սա այն կռիվը չէ, վոր տեղի է ունենում Շիրվանզադեյի «Քատս» ում կամ Նար-Դոսի «Պայքար»-ում: Մի ամբողջ աշխարհայացք է զբված այստեղ հին և նոր աշխարհի:

Մեռնող Մանուկյանների և Տեր-Սիմոնների կողքին ծլում է, բարձրանում է մի նոր սերունդ:

Արտավազդների և Շուշանիկների սերունդը: Բայց պիտի ասել, վոր աղոտ է դուրս բերված կոմերիտականի դեմքը: Նա չունի այն պայծառ և հարազատ պատկերը, վորպիսին ունեյին ուստա Մարգարը, Ալեքսեյը:

Պոեզիայի բնագավառում կոմերիաներն ունեցան իրենց փայլուն յերգիչները՝ Ա. Ժարով, Ուտկին և Բեզիմենսկին ռուսական գրականության մեջ. իսկ մեզանում Ալազան, Ն. Զարյան, վերջերս նաև Մ. Արմեն: Բայց մեր արձակ գրականությունը դեռ չի կարողացել վորսալ նրանց կենսունակ, գինամիկ կյանքը:

VII

Ն Ե Պ

Ծ. Թորգոմյանի սուր դիտողությունից չեն վրիպել նաև նեպամանական տարրերը:

Դեպի սոցիալիզմ ընթացող մեր յերկիրը փոխանցման մի շրջան է ապրում, ուր նեպական տարրերը դեռ ևս շարունակում են քարշտալ իրենց գոյությունը:

Ոսմանը և Սողոմոնը նահանջող նեպամանական տարրերի վերջին թափթփուկներն են, վորոնք Համլետի հոր նման ստվեր դառած, թափառում են մեր յերկրում:

Մեկը նստած խանութի դռան, քամի յե կուլ տալիս ձանձրութից և անգործությունից ճանձ է վորսում, մյուսը հոգեկան անհուն բավականություն է զգում, յերբ ռուս աղջիկ Մարուսիան իրեն «Ախ տի դուռակ» է անվանում:

Զույգ պատմվածքները գրված են 1921 թ., այսինքն այն ժամանակ, յերբ նեպման տարրերը ավելի ուժեղ եյին մեր յերկրում:

Այժմ նրանք կորցրել են իրենց վտանգավոր նշանակությունը և դատապարտված են դանդաղ մահացման: Յեվ մենք տեսնում ենք, թե ինչպես են մահանում նրանք Ծ. Թորգոմյանի յերկերում:

VIII

ԴԱՐՁ ԴԵՊԻ ՌԵԱԼԻԶՄ

Լուսնաչարսկին իր մի գրքի մեջ նկատում է, վոր ուսուսական գրականությունը դառնում է դեպի ռեալիզմ, նորից և նորից տարբեր վարիանտներով կրկնվում է գոյություն ունեցող լոգոսգը, «յետ դեպի Պուշկին»:

Լուսնաչարսկու պնդումները ճիշտ են նաև մեր գրականության վերաբերմամբ: Մեր մեջ էլ նկատվում է ուժեղ ձգտում դեպի ռեալիզմը:

Հեղափոխության տարիներին բանվոր դասակարգի գրությունը դեռ ևս անկայուն էր և յերերուն: Են ժամանակ մեզ մոտ ծաղկեց նեղ ուսմանտիզմ. աշխատանքի պաֆոս, հերոսամարտեր, յերազային հղացումներ դեռ շարունակում էին ապրել գրականության մեջ: Խորհուրդների իշխանության ստաբիլիզացիայից հետո վերածընվում է ռեալիզմը:

Ինչպես Ս. Կոզանն է նկատում, լոգոսգը չի բավարարում մեզ այլևս. մենք պորձնական ենք դառնում նաև գրականության մեջ և նրանք, վորոնք առաջին որերի հեղափոխությունից են գա-

ռանցում, պատրաստ են տեսնելու շատախոսներին և Դոն Գիշտաներին (Այդ տարիների գրականություն, էջ 12, Կոզան):

Տասնամյա խաղաղ կյանքից հետո, նորից կենտրոնական տեղ է գրավում ռեալիստական ուղղությունը:

Ծ. Թորգոմյանի, ինչպես նաև մյուս ուղեկիցների ամբողջ առաքելությունը կայանում է նրանում, վոր նրանք մեր գրականությունն առողջացրին, գլխիվայր շրջեցին և կանգնեցրին իր վոտների վրա:

2.

Առաջին անգամ լինելով մեր գրականության մեջ հայտնաբերվում է մի գրող, վոր որեկտիվորեն տալիս է ռեալ պատկերները Վանի խաղաղ կյանքի, լուսավորում նրա մութ խորշերը.

Նոր չէ, վոր մեր գրողներն իրենց ստեղծագործությունների նյութ են դարձնում տաճկահայերի կյանքը: Բայց բոլորովին նոր է այն մոտեցումը, վոր ցույց է տալիս Ծ. Թորգոմյանը:

Մեր պոետներն ու վիպասաններն այնտեղ տեսնում էին միայն «ալան թալան», «արցունքի հովիտ», բռնություն, հալածանք:

Իրանք անվերջանալի, միորինակ թեմաներ էին մեր գրողների համար: Յեվ ուսասիայ մաս-

սան ու քաղաքական շրջաններն այդ տենդենցիոզ և սանտիմենտալ վեպերից եյին քաղում իրենց տեղեկությունները և դրանց վրա հիմնում ֆանտաստիկ ծրագիրներ:

Մեր հեղինակը միանգամայն ազատագրված այդ հաշիշից դեն է նետում այդ ամբողջ ավանդությունները և մեր աչքի առջև բաց է անում տարբեր աշխարհ, ցույց տալիս կյանքը ինչպես վոր կա:

«Ձեք ծախող Ակոն» և «Ծուռ Վոսկոն», այդ աշխարհը պատկերացնող յերկու արժեքավոր յերկեր են:

Հեղինակի ծննդավայրն է ցոլանում դրանց մեջ:

Վերլուծելու և հասկանալու համար այդ զըրվածքները, հարկավոր է յետ դառնալ, գնալ այնտեղ, ուր տեղի յեն ունեցել այդ անցքերը. վերհիշել այդ «յերանելի ժամանակները», վորովհետև ժամանակն ու միջավայրը իրենց հարազատ կնիքն են թողել Ծ. Թորգոմյանի վրա:

Մոտավորապես յոթանասնական թվականների ուսահայոց հասարակության փոխհարաբերությունների պատկերն եր ներկայացնում Վանը:

Հայ ուժեղ ֆեոդալներ և մեծ կալվածատերեր չկային: Ընշող մեծամասնությունը մանր հողատեր գյուղացիներ էին: Քաղաքում խոշոր

տեղ էյին բռնում արհեստավորությունն ու անայնագործությունը: Ամեն մի վանեցի անպատճառ պիտի անցներ արհեստագիտական շկոլան, անպայման մի արհեստ պիտի սովորեր: Նրանց կոդեքսը թույլ չեր տա առանց «փոսկե տպարան-ջանը ձեռքն անցնելու» վերև հիմնական պրոֆեսիա ընտրել:

Վաշխառուական կապիտալը մեծ դեր եր խաղում Վանում: Զիմզիմոնիների պես մարդիկ շատ կային, վորոնք փողի տոկոսներով էյին շատացնում իրենց կապիտալը:

Սոշոր առևտրական կապիտալը դեռ գոյություն չուներ, բայց կային կապիտալի նախնական կուտակման բոլոր տվյալներ:

Բանվորության մասին, բառիս արդիական իմաստով խոսք լինել չեր կարող, բայց կային պրոլետարացման ճանապարհին կանգնած բազմաթիվ խավեր, խանութի աշակերտներ, շուրհակագործներ, մշակներ, տնային ծառայողներ:

Ո՞վ է ձեթ ծախող Ակոն: Սոցիալական վոք խմբավորման մեջ է մտնում նա: Ձեթ ծախողները մի առանձին խավ էյին ներկայացնում իրենց ուրույն հոգեբանությամբ և ապրումներով: Դրանք բանվորներ չէին տեխնիկական իմաստով: Բայց շահագործման էյին յերթարկվում անխիղճ կերպով:

Պրոլետարացման յենթարկվելով գյուղում Ա-

կոն դիմում ե քաղաք: Ընկնում Մարութենց Սամսոնի ճանկը:

«Մի հաղթանդամ մարդ ե նա, դեմքին այնքան կնճիռ կա վորքան ընկուզի կճեփին: Նրա հազար անգամ կարկատած և լաթերով կախ ձիթագույն շալվարն, այնքան լայն ե, վոր մի քանի սրունգ կարող ե տեղավորել, իսկ յեթե փորձեն ցայել, հավանաբար մի գըլմանքա ձեթ ծորա պիտի միջից: Գլխի արախչին յերեսուն տարվա պատմություն ունի և հնաստաապես վճռել ե մինչև նրա մահը գլխին բազմելու մեծագույն պատիվը վայելել»:

«Նրա կյանքին գին ու արժեք տվողը իր սիրելի, մտերիմ կուժն եր: Այդ հողակերտ, բարձրավիդ, ձեթով պատած կուժը, վոր նրա անբաժան ընկերն եր, գուրգուրանքի առարկան:

Այսպես ե Ակոյի Ֆիդիքականի նկարագրերը, նրա արտաքինը:

Ապա հեղինակը մեզ տեղափոխում ե Այգեստանի փողոցները, ուր զուլալ գլզացող ջրեր են հոսում, դուրս ե բերում վանեցի գպուցով և յազմայով խաթուններին ու խոսեցնում նրանց: Փողոցը միակ ակումբն եր, միակ հասարակաց վայրը կանանց համար, ուր հանդիպում եյին կանայք իրենց ձանձրույթի և հանգստի ժամերին: Նրանց

ընդհանուրի խոսակցության նյութը Ակոն ե և Ակոյի ամուսնությունը:

Յերբ իրիկուններ վերադառնում ե ձիթհանք, Մարութենց Սամսոն աղան, ձիթհանքի տերը, հաշիվ ե պահանջում Ակոյից:

— Հըմ, առուտուրդ ինչպես եր այսոր:

— Մի փութի չափ ծախել եմ, աղա, եսորվա կսմաթն եդ եր:

— Վահ, եդքան քիչ, եդպես աժդահա բոյ ունես, ախմախ ես մնացել ու գլխումդ ճանձի չափ խելք չկա:

Հետո Սամսոն աղան, «հորթի պես յերկար ականջներով այդ մարդը, հաշվում ե Ակոյի ծախսերը ու քվիթ են լինում, և Ակոյի գըպանում հակառակ ամբողջ որերի ծանր աշխատանքին սև հացի գինը նույնիսկ չեր մնում...»

Մենք գտնվում ենք ձիթհանքում: «Այստեղ շոգու և ելեբտրականության փոխարեն աշխատում են դանդաղաշարժ հաստամարմին գոմեշներ և ջլաբագուկ յեզներ. գըրգացող արագաթռիչ մեքենաների փոխարեն, ծուլորեն շարժվում են վողորկ ու խոշոր ջրաղացքարեր և հաստաբուն գերաններ»:

Նկարչական վրձինի և լուսանկարչական ապարատի ոգնությամբ, Մ. Թորգոմյանը պատկերում ե մեր առջև ձիթհանքը:

Չիթհանքի տանիքին բանվորներ են շարժվում այս կամ այն կողմ, սեահար, դժգուշն դեմքով. նրանք մեջքը խրել են կտավատի մեջ և զրույց են անում: Այդ խոսակցությունից մենք իմանում ենք, վոր դասակարգային գիտակցությունը մտել է նաև ասիական այդ խուլ և հեռավոր անկյունը:

Դա այլևս հին, նահապետական համակեցությամբ ապրող յերկիրը չէ, ուր գառն ու գայլը միասին եյին արածում:

Նրանք իմացել են արդեն, վոր գելը ծվատում է, լափում և չի կշտանում:

— Դիշեր, ցերեկ բանում ենք, տուն, ընտանիք սև հաց ու սոխով հազիվ ենք պահում:

— Եսոր Սամսոն աղայի յերեխան կնքում են, զիշերս նրա տան մեծ խնճուղք կա, գինին հոսում է ինչպես մեր թաղի «չրո, չրո աղբյուր»-ը:

— Իսկ մենք այստեղ անոթի, անոթի կըղկտանք:

Ինչպես տեսնում եք բանվորները դժգոհ են: Նրանք բողբոջում են իրենց հոգսերից և նեղություններից:

Ճիշտ է, դեռ ևս մշուշային է և աղոտ այդ դասակարգային գիտակցությունը: Նա չունի մեր բանվորի պայծառ հասկացողությունը կովի և պայքարի: Հեղինակը միանգամայն կանգնում է ռեալ

հողի վրա, հավատարի՛մ իր ժամանակին և միջավայրին:

Ծ. Թորգոմյանը ավելի չի խորացնում այդ անտագոնիզմը: Դա կը լիներ դուրս քալ իրականության սահմաններից և տարվել ուսմանտիզմով:

Դրանից կտուժեր գրվածքի գեղարվեստական կողմը:

1905 թվի ուսական առաջին հեղափոխության և հակայական զործագուշների ակիքները հասել եյին նաև Վան, ծեծում եյին Շամիրամի ամբոցի կողերը:

Արևելքի մեծ բռնապետությունն անկարող էր պատնեշ կանգնեցնել նոր հոսանքների դեմ, վորոնք խուժելով յերկիրը ակոսում եյին Վանի յճի խաղաղ մակերեսը, շարժում եյին նահապետական ճահիճը, ճեղքվածք փորում հասարակության մեջ:

«Թագա խարբիկները» մտնում են նաև Սամսոն աղայի գետնափոր ձիթհանքը, վորից մառախուղը յերբեք չեր հեռանում:

Ծ. Թորգոմյանը նկատում է այդ հակասությունները և կանգնում դասակարգային շերտավորման ուղու վրա:

Տեղական կյանքը, այն ինչ վոր գրականության մեջ փոխու լուխալ է կոչվում, յերևան է գալիս իր ամբողջ որիզինալությամբ և գեղեցկու-

Թյամբ: «Ձեր ծախող Ակո»-ի մեջ Թորգոմյանը
 բեալիստ է և կենցաղագիր: Նա տալիս է նկար-
 չական ռեալ բնույթագիծը տիպերի, վոչ շատ
 խոսքերով և միջանի լայն շարիխներով ուրվա-
 գրծում է Վանի կյանքը, տալիս է գլխավոր տպա-
 վորություններ, եյական գծեր, մանրամասնու-
 թյունները թողնելով ընթերցողին:

Ծ. Թորգոմյանը հանդես է գալիս այստեղ
 վորպես կենցաղագիր: Վանեցիների բարքերն ու
 սովորությունները, խաթունների տիպիկ խոսակ-
 ցությունները, հարսների և աղջիկների քչփչոցը,
 լավաշ թխելը. այս բոլորի պեյգածը դուք գտնում
 եք իր ամենահաջող վեպիկներից մեկում:

Հեղինակն այլևս չի մեղանչում արվեստի պա-
 հանջների դեմ: Չկան ավելորդաբանություններ,
 անհարկի գատողություններ և յերկար խոսակցու-
 թյուններ:

Իր վոճը պայծառ է, հստակ և անպաճույճ,
 ինչպես վոր պարզ է Ակոյի հոգեկան կյանքը:

Մի նոր նվաճում է անում Ծ. Թորգոմյանի
 արվեստը «Յեր ծախող Ակո»-ի մեջ: Մի մեղմ
 յումոր, մի թեթև յերգիծանք խառնված ենք տես-
 նում նրա գունեղ պատկերացումների և կենցա-
 ղային բնույթագծերի հետ:

«Ձեր ծախող Ակո»-ն հեղինակի ամենատի-
 պիկ գործն է և գեղարվեստորեն մի ամբողջա-
 ցած յերկ:

ՆԱՐ-ԴՈՍՆ ՈՒ ԾԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄՅԱՆԸ

«ՕՈՒ Վոսկո» վեպիկը դարձյալ կենցաղա-
 յին մի պատմվածք է առնված Վանի կյանքից:
 Կնոջ ստրկական կյանքն է նկարագրված այն-
 տեղ: Կանանց ամուսնացնում են այնտեղ իրենց
 կամքին հակառակ: Կինն անշունչ մի առարկա յե,
 մի իր:

Մարիամ խաթունն ամուսնացնել է ուզում
 իր տղային: Յեվ ահա մի ամբողջ կամպանիա յե
 տարվում թաղում Մանուշակենց Վոսկոյի ոգտին:

Ինչպիսի առավելություններ և արժանիքներ
 ունի նրանց թեկնածուին.

— Համեստ, խոնարհ աղջիկ՝ ինչպես գառը,
 լեզուն կարճ, ձեռքն յերկար:

Անվիճելի առաքինություններ եյին սրանք վա-
 նեցիկների համար:

— Չանր՝ մ, յես ել այդպիսին կուզեմ, տունս
 պահող ծաղկեցնող ապրանք:

Հարևանուհիների յեռանդուն պայքարը հա-
 ջողությամբ է պսակվում. Վոսկոն արդեն Մա-
 րիամ խաթունենց տանն է, հարսի դերում:

Հարս գառնալու որից սկսում է նրա վող-
 բերգությունը:

Վոչ ամուսինն ե խոսում հետը և վոչ կեսուրը: Լավագույն դեպքում խոսում են այն ժամանակ, յերբ հարկավոր ե բանեցնել նրան.

— Ախշի, սևասիրտ, այս շորերը լվա, ամանները մաքրե, սենյակի հատակն ավլե ու գորգերը թափ տուր:

Կամ՝

— Վոսկո, սևասիրտ, փոշին բոնել ե ատուս, չմաքրե՞ս. քեզ ատուս բերի, վոր շենշենլիք գցես, ձրի հաց ուտող չբերի, հող գլխիդ:

«Որերը կանցնեյին այսպես ու Վոսկոյի բերնից գժգոնության խոսք չեր թռչում, անբարբառ թռչուն: Արդեն աղջիկ ժամանակն ել չխոսկան եր»:

Սոցիալական և քնտանեկան մի այգպիսի դատան պայմանների արդյունքը լինում ե այն, վոր Վոսկոն խելագարվում ե:

Անցյալ տարի միաժամանակ լույս տեսավ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածքների ժողովածուն:

Զարմանալի նմանություն կա Մ. Թորգոմյանի նկարագրած Վանի թաղերի և Թիֆլիսի արվարձանների միջև:

Կնոջ նույն սարկական պատկերը, նույն խեղճությունը տեսնում ենք նաև Նար-Դոսի կանանց մոտ: Խոշոր առևտրական Թիֆլիսը շատ առաջ չի գնացել նահապետական Վանից:

Ինքնաշարժերով, արագավազ ավտոներով և Զագեսյան հուժկու ելեքտրականությամբ լուսավորվող Թիֆլիսի յետամնաց թաղերում, Ռուսթավիլու կողքին, Ելիայի և Շխյոյի թաղերում դեռ շարունակում են հին կյանքի մնացորդները, վորոնք վոչնչով չեն տարբերվում Վանի Այգեստանի կենցաղից:

Տգիտության, սնտախապաշտության զոհեր են Ծ. Թորգոմյանի և Նար-Դոսի կանայք:

Աննան և Վոսկոն, յերկուսն ել, ինչպես Ա. Տերտերյանն ե ասում, «խորովում են մարդու և կեսուրջ յերկայնաքարերի արանքում, աղում-մաղում որերը»:

Նրանք վոչ միայն բողոքել չգիտեն, այլ և խնդրելու շնորհքն ել կորցրել են.

— Վո՛ւյ, չխփես, Յագո ջան, հոգուդ մեռնեմ, չխփես, ջանս ցավում ա... աղաչում ե Աննան գլուխը յերկարած:

— Հը, խո չէս ուզում, ես սնաթիս ճիվը ճվիցդ հանեմ, ճիվի պես ճխեմ վոտիս տակը: Յեվ մի անազին բոունցք, կարծես յերկաթից ձուլված ծանր ու դանդաղ իջավ կնոջ կողքին: («Մեր թաղը», եջ 94):

— Արշակ ջան, խիղճ չունե՞ս, սաղ-սաղ կըխեղդե՞ս կինդ: Ու կատաղած ջան պես ամուսինը բռնեց կնոջ վիզը, սեղմեց, ատամները կրճտացնե-

լով: Վոսկոնն թույլ ճիչ արձակեց, թպրտաց ինչպես մորթոտվող հավ:

Ավելի նման են խելագարության մոմենտները: (Տես «Ծուռ Վոսկո», էջ 59, Ծ. Թ. Յերկերի ժողովածու).

— Վայ, կծեցին, ոձ, ոձը...

— Ի՞նչ ոձ, աղջի:

— Խաթուն, ոձը հրեն կանգնել ե ողակ ողակ կկծի...

— Ի՞նչ ոձ, ի՞նչ բան, աղջի...

— Մտել ե տունս թունավորում ե զիս...

Այժմ Նար-Դոսի «Մեր թաղից», էջ 23.

— Վայ, հայրիկ ջան, շներ, կատվանիք. կանչեց Մարթան սարսափահար:

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում.

— Շներ, կատվանիք, — կրկնեց Մարթան:

Յե՛վ հայրը զգաց, վոր նա ամբողջ մարմնով գողում ե:

— Ի՞նչ շուն, ի՞նչ կատու, վորդի ջան.

— Հրեն միսը քրքրում են...

— Ի՞նչ միս, վորտեղ.

— Հրեն թախտի տակը, թախտի տակը...

Բազմաթիվ են նմանության կետերը:

— Աստված ինձ մարդ ե ստեղծել թե՞ շուն...

հարցնում ե Նար-Դոսի կանանցից մեկը:

— Բայց Վոսկոնն ել սիրտ ունի, չե՞, մարդ ե,

մարդու աղջիկ, — խոսում ե Թորգոմյանի հերոսուհին:

Յերկու հեղինակներն ել իրենց տղամարդ հերոսներին զինետուն են ուղարկում, ուր անցկացնում են նրանք իրենց ժամերը զինի խմելով կամ թուղթ խաղալով:

Փոխադարձ ազդեցության մասին խոսք լինել չի կարող: Գրքերը լույս են տեսել միաժամանակ:

Գաղանիքը կայանում ե նրանում, վոր յերկունն ել որեկտիվորեն են զիտում կյանքը, կյանքից են քաղում իրենց նյութը և սերտ կապերով կապված են իրական կյանքի հետ:

Յերկուսն ել ռեալիզմի ներկայացուցիչներ են. մեկը իր գրական վերջալույսին, իսկ մյուսը իր գրական հասուն տարիքին գծում են մեր գրականության ուղին:

Մեկը Թիֆլիսի թաղերի, իսկ մյուսը Վանի տեղական կյանքի վարպետ նկարիչներն են:

Յերկուսի վրձիններն ել գունեղ են և արտահայտիչ: Զույգ քաղաքների ժողովրդական բարբառները յերևան են գալիս իրենց լեզվի և վոճի առանձնահատկությամբ:

Հետամնաց թաղերի խուլ անկյուններից, բընակարանի նկուղներից՝ ինչպես հանքերի խորքերից՝ դուրս են քաշում Վոսկոների և Աննաների կենդանի, թրջված զիակները. Դոստաևսկու

սարսուռն ե անցնում մարմնովդ, յերբ կարդում ես կենդանի դիակների նկարագրութիւնը:

Ծ. Թորգոմյանը «Ծուռ Վոսկո» գրվածքով ցույց ե տալիս, վոր ինքը ձիւք ունի տալու վոչ միայն արտաքին, ֆիզիքական աշխարհը, այլ և կարող ե թափանցել մարդկանց հոգեկան աշխարհը:

Նա վերլուծում ե կյանքը, ըմբռնում ե միջավայրի, սոցիալական փոխհարաբերութիւնները ունեցած ազդեցութիւնը հոգեկանի վրա:

Ծ. Թորգոմյանը դիտող ե վոչ միայն արտաքին աշխարհի անց ու դարձի, այլ և մարդկային սրտի և հոգու ալեկոծութիւնները:

Կանացի տիպերի և դեմքերի մի գալերիայ ե ներկայացնում Ծ. Թորգոմյանի գրականութիւնը:

Ավետիսյան Մարգարը՝ Թորգոմյանին նվիրված յերեկոյին այն միտքն արտահայտեց, վոր հեղինակի մոտ կանայք միշտ ակտիվ գերերում են յերևան գալիս, և կանացի տիպերը գերակշռում են տղամարդկանց:

Ծ. Թորգոմյանը սուզվեց կանանց այդ տիպերի պատկերասրահում:

Նրա Ոլիան՝ դգայականութիւն մարմնացումն եր, Աստղիկը՝ հավերժական սիրո ցնորքներով եր ապրում, Մարուսիան՝ պահարան կարեց, իսկ Վոսկոն խելագարվեց:

Դեռևս նոր կնոջ տիպը մենք չենք տեսնում

Ծ. Թորգոմյանի յերկերում: Այն խորհրդային կինը, վոր վոչ միայն սիրո աղբյուր ե, այլ և սոցիալական արժեք ներկայացնող մի մեծութիւն, մեր հավասար ընկերը՝ աշխատանքի և քաղաքական գործունեյութիւնի ասպարեզում:

Խորհրդային կինը հասարակական և կուլտուրական խոշոր խնդիրներ ե առաջադրել, մեծ իդեալներ ե ընդգրկում. այժմ բոլորովին ուրիշ խնդիրներ և հարցեր են իմաստավորում նրա կյանքը:

Մենք նրա գրվածքներում նոր շատ բան տեսանք, բայց նոր կնոջը չտեսանք:

Հեղինակը վորոնումները մեջ ե, և մենք Բ. Ժողովածուի մեջ կտեսնենք նաև խորհրդային նոր կնոջ տիպը:

Չնայած Ծ. Թորգոմյանի կարճամյա գրական գործունեյութիւն, բայց այնուամենայնիվ բազմապիսի թեմաներ ե շոշափել նա:

Չարիզ Դիկկենսի վարպետութիւնը նա տալիս ե պատմութիւններ «Մի մանկան կյանքից»:

Մանուկների աշխարհում նույնպես աչքի յե ընկնում Ծ. Թորգոմյանը իր գրելու ընդունակութիւններով և ձիրքերով, Բայց մենք այդպիսի գրվածքներով չենք զբաղվի, վորովհետև զրանք չեն շոշափում գաղափարախոսական այն ետապները, վորոնց վրա կանգ առինք վերլուծման մեջ:

X

Ծ. ԹՈՐԳՈՄՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Մենք ավելի շատ յերկար կանգ առինք նրա աշխարհայացքի աստիճանական զարգացման վրա, անտեսելով սակայն յերկերի գեղարվեստական կողմը:

Մենք ցույց տվինք հետևողական կարգով այն ուղին, վորտեղից անցավ նա ետապ առ ետապ:

Նա անցավ մանր բուրժուական և բուրժուական խավերից հասավ հեղափոխական պրոլետարիատին:

Պատերազմ, քաղաքացիական կռիվներ, նեպ, ծննդավայրի կյանքը, նոր սերունդ, — ահա այն մարշրուտը, վոր կատարել է նա: Ամեն տեղ ցույց տալով դասակարգային ըմբռնողություն, հնի և նորի խնդիր:

Նրա գրականությունն ուշագրավ է սյուժետները պես պիսությունը և առատությունը: Կենդանի, հարածուն, շարունակ փոփոխվող զրական մի կյանք է ապրել Ծ. Թորգոմյանը, զրա համարել մեր կյանքի բազմապիսի պայմաններ, տիպեր ու խավեր արտացոլում են նրա գրվածքներում:

Սոցիալական և մտավոր այն մեծ հեղեղը, վոր անցավ մեր խորհրդային յերկրի վրայից 1917 թվին, և ստեղծագործական այն վիթխարի աշխատանքն ու կուլտուրան, վոր ծայր է տվել մեր հսկայական յերկրում, գտան իրենց արձագանքները նրա յերկերում:

Այդ բոլորն արտահայտելու և գրի առնելու համար բազմատեսակ ձևեր ունի Թորգոմյանը:

Գրելու տեխնիկան, վոճը և լեզուն շարունակ հառաջադիմելով իրենց կատարելություն հասան Զեթ ծախող Ակոյի մեջ իրենց կլասիկ պարզությունը:

Նա լեզվագիտական եկսպերիմենտներ չկատարեց, չտարվեց «վոճային տրյուկներով»: Մի ժամանակ, և մինչև հիմա յել, մեր ամբողջ գրականությունը յունը դարձավ լինգվիստական մի մրցադաշտ, մի մարզահանդես:

Մի քանիսին հաջողվեց (Ակսել) գեղեցիկ ձևեր գտնել, բայց նրանք էլ ընկան ֆոռմալիզմի յետևից, գոհ բերելով դրան բովանդակությունը: Ժանրիստական գրականություն է դա, վոր իր մեջ զարգանալու սաղմեր չի պարունակում:

Ծ. Թորգոմյանը չտարվեց վոչ մի ֆոռմալիզմով:

Այդ տեսակետից նա վոչ մի շկոյայի չի պատկանում, որիգինալ է ամբողջապես:

Ռեալիզմի սահմաններէց զուրս չեկա՛վ, ռեալիզմ — բանվորական թեքումով, պարզ և հասկանալի:

Նրա բոլոր գրվածքներն ել ունեն իրենց թեման, մի հիմնական միտք, մի սոցիալական պրոբլեմ կա ընկած անգամ նրա ամենափոքր պատմվածքի հիմքում:

Մեծ դիտողականությամբ ե ոժտված մեր հեղինակը: Նրա սուր դիտողությունից վոչինչ չէ խուսափում: Նա մի ամբողջ պատմվածք է գրում ճաշարանապետ Սողոմոնի մասին՝ մինչդեռ մի ուրիշ գրող — նվազ դիտողականություն ունեցող — կանցներ վոչինչ տեսներով:

Այցելելով գործարան, իսկույն վորսում է Մարգարի տիպը: Բավական է, վոր նա մտնի դասարան և ահա պատրաստ է «Որ. Ռիման»: Փողոցում նրա ականջին ավելի սուր է հնչում հնավաճառ Ոսմանի զիլ ձայնը:

Զարմանալի հեշտությամբ և արագությամբ նա թեմաներ է գտնում ամեն տեղ:

Նրա տիպերը չափազանց կենդանի յեն և իրական, կարծես նրանք շարժվում են մեր աչքի առջև:

Ինչո՞ւն է կայանում գաղտնիքը:

Ծ. Թորգոմյանը միշտ մի մոգել ունի իր աչքի առաջ այս կամ տիպը նկարելիս:

Նկարչի պես նա նատուրայից է նկարում. դրա համար ել սնտովոր ուժ կա նրա նկարագրությունների մեջ:

Վո՞ր վանեցին չի ճանաչում Ծուռ Վոսկոին: Հյուսիսային կովկասում ապրող մարդիկ անպատճառ լսած կլինեն Բորիս Չերաչևի մասին: Սատեր Սիմոնն է, նա մեր ուստա Մարգարը, սա որիորդ Ռիման. —

Բոլորն ել իրական անձնավորություններ են յեղել:

Բնորոշ է այն անեկոտային, բայց ստույգ յեղելությունը, վոր պատմել է ինձ հեղինակը:

Թիֆլիսի դպրոցներից մեկի ուսուցչուհին կարդալով «Որ. Ռիման», իր հարազատ պատկերն է տեսնում և վիրավորված մի որ բռնում է ճանապարհին Ծ. Թորգոմյանին, և բողոքում է, վոր առանց իր թուլտվություն ստանալու, իր մասին է գրել...

Նման պրիոմներ շատ կան միջազգային գրականության պատմության մեջ:

Պալզակը և Մոզասանը Ֆրանսիական գրականության մեջ, Գոգոլն ու Չեխովը ռուսական, մեր որերում հակ Բաբելը, միշտ կենդանի որինակներ են ունեցել իրենց աչքի առջև, այս կամ այն տիպը գծագրելիս:

Նա անտարբեր չէ դեպի իր տիպերը: Նա

Չեխովի պես չի ասում՝ «յերբ կնստես գրելու յեղիք սառն ինչպիս սառույց»:

Ծ. Թորգոմյանը Դոստոևսկու պես է նայում գրականության, «ստեղծագործելու համար պետք է տառապել»: Ուրիշ խոսքով, սերտ կապ պահել կյանքի հետ. խառնվել, մերվել այդ կյանքին:

Յեվ իսկապես, նրա գրիչն ավելի սահուն և արագ է աշխատում, յերբ խոնարհ մարդկանց կյանքն է նկարագրում (Ակո): Ինչպիսի ինտիմ և քաղցր բան կա այն գրվածքներում, ուր նա բանվորի աշխատանքն է յերգում. Ուստա Մարգարի մոմատուքը, արձակ մի հիմն է նվիրված աշխատանքին: Նրա գրականությունը արձակ լիբիդոյի յե վերածվում, յերբ նա խոսում է իր ծննդավայրի մասին:

Անկեղծ տոն ունի նրա ձայնը, յերբ ասգերի համերաշխության մասին է խոսում («հարևաններ»): Նա իրեն ուժեղ է զգում, յերբ հեղափոխական կռիվներ և անցքեր է նկարագրում («Ո՞վ է մեղավոր»):

Ատելության զգացումը բռնում է ձեզ, յերբ Միրզաբեգովները և Սամսոն Աղաների մասին եք կարդում: Այս ամբողջը ցույց են տալիս, վոր Ծ. Թորգոմյանը «անկռիվ ապրումների շրջան» չի ապրում:

Ամեն տեղ նրա համակրանքը նորի կողմն է: Նա մաքրել է իր հաշիվները հին կենցաղի և հին աշխարհի հետ:

Սանսլոթպաններին և գործարանատերերին խարինել են բանվորները, հին սերնդին նորերը:

Նա մտել է նոր աշխարհ—կոռուդային: Մենք սպասում ենք, վոր Ծ. Թորգոմյանը իր Բ. ժողովածույով հրապարակ գա վորպես ավելի հարազատ արտահայտիչ մեր նոր աշխարհի: Մենք սպասում ենք, վոր նա խորանալով նոր ախպերի շրջանում, ընդգրկելով նորանոր մարդկանց և խնդիրներ, կտա մեզ պատկերը ստեղծագործական այն մեծ աշխատանքին, վոր ծավալվում է այսօր խորհրդային յերկրներում:

Մոտիկից ծանոթ լինելով նրա ներուժ կարողություններին, մենք գիտենք, վոր զարգանալու և մեծանալու գեռ շատ և շատ հնարավորություններ ունի Ծ. Թորգոմյանը:

1927 թ. Թիֆլիս.



Ց Ա Ն Կ

Եջ

I Վանը մեր գրականութեան մեջ	5
II Ծ. Թորգոմյանի գրական կյանքը	16
III Հոտանքի դեմ	24
IV Կին և սերը Ծ. Թորգոմյանի յերկերում	37
V Վերաբերմունքը դեպի հեղափոխություն	45
VI Հայրեր և զավակներ	57
VII Նեպ	61
VIII Դարձ դեպի սեպուղի	62
IX Նարդոս և Ծերուն Թորգոմյանը	71
X Ծ. Թորգոմյանի արվեստը	78

16
2275

BM

«Ազգային գրադարան»



NL0382340

67.327

